№ 195 ՈՒՐԲԱԹ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1917 ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ ՈՒՐԲԱԹ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 195

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Սեպտեմբ. 1-ից մինչև տարվայ վերջը 7 ր.։ Ամսական 2 րուբլի։
Արտասահման՝ սեպտ. 1-ից մինչև տարվայ վերջը 14 ր., ամսական 4 ր.։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 15 ԿՈՊ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելէֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Ցայտարարութիւնների համար վճարում են՝ Կովկասում խմբագրականի տողատեղին 30—20 կոպ., Կովկասից դուրս՝ 40—30 կոպ.։
Հասցէն փոխելու համար պիտի ուղարկել թէ հին հասցէն և թէ 50 կոպ.

ՄՇԱԿ

Բաժանորդագին Ռուսաստանի համար (փոփոխված գներով).
4 ամիսը—7 ր., 3 ամիսը—6 ր., 2 ամիսը—4 ր., մի ամիսը—2 րուբլի։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 50 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 50 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։
հասցէն՝ Тифлисъ, Редакція „МШАКЪ"
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».
Ցայտարարութիւնների համար պիտի վճարել՝ Կովկասում—I երեսի վրա խմբագրականի տողատեղին (պետիտ)—30 կ., IV երեսի վրա—20 կոպէկ։
[illegible] ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Միջկուսակցական Խորհրդակցութեան կողմից ընտրված Կազմակերպիչ Բիւրօն յայտնում է, որ Խորհրդակցութեան որոշմամբ ներկայ սեպտ. ամսի 27-ին կայանալու է Թիֆլիսում **Ազգային Համախորհրդակցութիւն** (կօնֆերէնցիա), որին մասնակցելու հրաւիրված են զանազան հոսանքների, կուսակցութիւնների, հասարակական, ազգային-կուլտուրական-դպրոցական և դեմօկրատիական կազմակերպութիւնների, դասակարգերի ներկայացուցիչները հետևեալ կազմով.

1) Ամենայն Հայոց Կաթողիկոսի մի ներկայացուցիչ
2) Գիւղացիական երկրային կենտրոնի հայ անդամները
3) Բանւորական » » » »
4) Զինւորական » » » »
5) Նահանգական և շրջանային գիւղացիական միութիւններ՝ Երևանի—4, Կարսի—2, Ալէքսանդրապոլի—2, Գանձակի նահանգի—3, Ախալքալաքի—2, Շուշու—1 ներկայացուցիչներ, ընդամենը 14։
6) Կոօպերատիվ միութիւնների, այն է՝ Երևանի—2 և Ալէքսանդրապոլի, Ախալքալաքի, Կարսի, Շուշու, Շամշադինի, Ղազախի մի-մի ներկայացուցիչ ընդամ. 8։
7) Հետևեալ քաղաքային ինքնավարութիւնների, հայկական ֆրակցիաների ներկայաց., այն է՝ Թիֆլիսի—8, Երևանի—4, Ալէքսանդրապոլի—4, Գանձակի—2, Կարսի—3, Նոր Բայազէտի—1, Շուշու—2, Նուխու—1, Ախալքալաքի—1, Ախալցխայի—1, Գորիի—1, Գորիսի—1, Հին-Նախիջևանի—1, Բաթումի—1, Թելաւի—1, Սղնախի—1, ընդամենը 32 ներկայաց.։
8) Հետևեալ քաղաքների հայ հասարակութիւններից. Բագու—6, Աստրախան—1, Եկատերինոդար—1, Արմաւիր—1, Օդեսսա—1, Նոր Նախիջևան—2, Սիմֆերոպոլ—1, Թէոդոսիա—1, Պետրովսկ-Կիսլովոդսկ—1, Վլադիկավկազ—1, Սամարղանդ—1, Տաշքենդ—1, Ասխաբադ—1, ընդամենը 19 ներկայացուցիչներ։
9) Քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչները, այն է՝ Դաշնակցութեան—8, Հայ Ժող. Կուսակցութեան—2, Հայ կադետների—1, Սոց.-դեմօկրատ. կուսակց.—2 մենշևիկ և 1 բոլշևիկ և մէկ՝ հայ կազմակերպութիւնից, Սոց.-յեղափոխակ.—3, Հնչակեան—2, ընդամենը 19 ներկայաց.։
10) Ներսիսեան Ճեմարանի, Էջմիածնի Ճեմարանի, Թիֆլիսի, Երևանի, Ղարաքիլիսի, Նոր-Նախիջևանի թեմական դպրոցների, Թիֆլիսի Ցովնանեան, Գայեանեան, Ալէքսանդրապոլի Արղութեան, Բագուի Հովսիսեան, Շուշու Մարիամեան-Ղուկասեան, Երևանի Գայիանեան և Ախալցխայի [illegible] օրիորդական դպրոցների մի-մի ներկայացուցիչներ, ընդամենը 13։
11) Հայկական Կենտրոնական Ազգ. Բիւրօն—5, Պետրոգրադի և Մոսկվայի եկեղեցական խորհուրդների, Պետրոգրադի և Մոսկվայի հայկական կոմիտէների, Կովկ. Հ. Բարեգ. Ընկ., Հայ Նպաստամ. Ընկեր., Հայոց Գիւղատ. Ընկ., Հայուհեաց Բարեգ. Ընկ., Հայ Ուսուցչական Միութեան, Հայ Գրողների Ընկեր., Բագուի Կուլտուրական Միութեան, Մարդասիրական Ընկ. մի-մի ներկայաց., ընդամ.—17։
12) Հայ զինւորական միութեան 5, Թիւրքահայերի 7 ներկայաց., ընդամենը—12։
13) Պետական Դումայի բոլոր չորս կազմերի հայ անդամները—5։
14) Հայկական կամաւորական խմբերի 7 խմբապետները՝ Անդրանիկ, Դրո, Համազասպ, Արղութեան, Վարդան, Պանդուխտ և Իշխան։
15) Վաճառականութեան և արդիւնաբերութեան ներկայացուցիչներ՝ Թիֆլիսից—2, Բագուից—2, Երևանից—1, ընդամենը—5։

Կազմակերպիչ Բիւրօն յայտնում է, որ թէև այս բոլոր վերև յիշած հաստատութիւններին ուղարկված է հրաւէր հեռագրով և գրութեամբ, բայց ի նկատի ունենալով հեռագրատան և պոստի անկանոնութիւնը՝ հնարաւոր է, որ մի քանի հաստատութիւններ չը ստանան այդ հրաւէրը, ուստի ներկայ յայտարարութիւնը պէտք է ընդունել իբրև պաշտօնական հրաւէր և կատարել պատգամաւորների ընտրութիւնը։
տա. (ա. օ.) 1117 3—2 Կազմակերպիչ Բիւրօ

Ուրբաթ, սեպտեմբերի 15-ին,
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Գրիբոեդովսկայա փողոց)
Տեղի կունենայ
Մարիէտտա Շահինեանի
Երկրորդ և վերջին դասախօսութիւնը՝ ռուսերէն լեզվով
Հայ սօցիալիստ
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ
Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին
Տոմսակները 3 րուբլուց մինչև 50 կ., կարելի է առնել Մատուրեանի խանութում (Դվորցովայա)։ տա. (ա.օ.) 1118. 3—3

ՀԱՑ

Ի գիտութիւն այն հիմնարկութիւնների, որոնք կողմակի կերպով հաց են [illegible] իրանց կարիքների համար.

[illegible] ինչպէս հացթխարաններին բաց թողնվող ալիւրի [illegible] քանակի վերաբերմամբ, Քաղաքային Պարենաւորման Կոմիտէն խնդրում է բոլոր հիմնարկութիւններին, այն է՝ խնամողական, հիւանդանոցային և հանրակրթական հիմնարկութիւններին, Կարմիր Խաչին, Քաղաքային և Զեմստվոյին Միութիւններին և այլն, որոնք իրանց կարիքների համար հաց են թխել տալիս մասնաւոր հացթխարաններում, շտապ կերպով հաղորդել Քաղ. Պարենաւորիչ Կոմիտէի Հացի Բիւրոյին, թէ որ հացթխարանում են հաց թխել տալիս և թէ օրական քանի պուդ ալիւր է տրվում հացթխարանին՝ հաց պատրաստելու համար։
Քաղաքային Պարենաւորիչ Կոմիտէ
տա. 1100. 5—5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ԿԵՕՆՋԵԱՆ
Վերադառնալով ամառանոցից՝ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։
Պլոմբ, ընդհանուր բժշկ., արհեստ. ատամներ, կորօնկաներ ոսկուց և պլատինից, ոսկեայ կամուրջներ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. ամեն օր, բացի կիրակի օրերից առ. 10—1 ժ., երեկ. 4—7 ժ.։
Лермонтовская ул. № 1. մօտը պլեխանովսկի։
(ա. մ.) տա. 1086 0—7

ՍՏԵՂԾԵՑԷՔ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՐԳ

Նշանակալից է զինւորական մինիստր Վերխովսկիի ճառը, արտասանած պատգամաւորական խորհուրդների նիստում։ Եթէ կամենում էք, որ Գերմանիայի սուրը չը դառնանք և կարողանանք յաղթել Ռուսաստանին, Թիւրքիային և Բուլղարիային, ստեղծեցէք յեղափոխական կարգ ու կանոն և իշխանութիւն, այժմ։ Այսինքն պէտք է ստեղծել մի այնպիսի ուժեղ իշխանութիւն, [illegible] հաշտութիւնը հաստատ քայլերով, տալով ժողովրդին [illegible], ստեղծելով հզօր զօրք, տալով ժողովրդին հաց, հաստատելով երկրի մէջ կարգ, քիչ խօսելով և շատ գործելով։

Իսկ դրա փոխարէն ինչ ենք մենք տեսնում և ինչ ունենք։ Նախ բացակայում է ուժեղ իշխանութիւն, որովհետև պաշտօնական կամ օրինաւոր ժամ. Կառավարութեան և նրա տեղական օրգանների կողքին կից՝ հասարակական ինքնաստեղծ յեղափոխական կոմիտէներ, որոնք չեն ճանաչում նոյն իսկ նրա հեղինակութիւնը։ Երկրորդ, փոխանակ ձգտելու ի մի համախմբելու երկրի բոլոր կենդանի ուժերը, փոխանակ համագործակցութեան հրաւիրելու դեմօկրատական բոլոր հոսանքները, այն կուսակցութիւնները, որոնք մասնակցել և աջակցել են յեղափոխութեան ծագման և զարգացման, երկրի քաղաքական կեանքը ղեկավարող շրջանները սկսել են հալածանք ոչ միայն բուրժուազիայի, կադետների դէմ, այլ և իրանց համախոհ և համամիտ կուսակցականների դէմ, որոնք, փորձված կեանքից, աւելի շրջահայեաց են և հեռատես։ Եւ դրանից առաջ է գալիս այն երևոյթը, որ այն, ինչ որ երէկ համարվում էր «ձախակողմեան, յեղափոխական», այսօր արդէն համարվում է ռէակցիօնական։ Հետզհետէ ձգտելով աւելի և աւելի արմատական պահանջների, երկրի քաղաքական կեանքի այժմեան ղեկավարները անց են կացնում թանգագին ժամանակը ապարդիւն պայքարի մէջ, չեն կատարում ոչ մի ստեղծագործական աշխատութիւն, հետևաբար և ոչ մի տեղ, ոչ գործի մէջ, ոչ գաւառներում, չէ ստեղծվում որևէ կարգ, կանոն, չեն հաստատվում շինարար կազմակերպութիւններ, այլ ամեն տեղ տիրում է երկիշխանութիւն կամ անիշխանութիւն, ամեն տեղ սոսկալի թանգութիւնը, նոյն իսկ սովը իր ճիրաններն է արձակում և ամեն տեղ դժգոհութիւնը, զայրոյթը աճելով աճում է, ու յակամայից ժողովուրդը համեմատութիւն է անում հին և նոր ռէժիմի միջև և հակվում է այն կարծիքին, թէ հին ցարական ռէժիմի օրով աւելի հեշտ էր ընթանում կեանքը։

Հապա Մոսկվայում կայացած համառուսական պետական խորհրդակցութիւնը կարողացել էր հաշտութեան, միաբանութեան մի կամուրջ ձգել երկրի ղեկավար հոսանքների միջև, և ահա ձեռնարկվում է մի նոր խորհրդակցութեան, նեղ կուսակցական, դասակարգային կազմով, որից արտաքսվում են երկրի միւս բոլոր կենդանի, դեմօկրատական ուժերը, կցելով յանիրաւի նրանց ճակատին «հակայեղափոխական» դրոշմը։ Եւ այդպիսի գործունէութեան հետևանքն այն է լինում, որ, ինչպէս ճիշդ նկատում է «Рус. Слово» թերթը, մենք կործանվում ենք։ Կործանվում ենք, որովհետև զինւորները և հրամանատար կազմը աւելի և աւելի են խորթանում իրարից. չփոթութիւնը գործի մէջ սաստկանում է և դրանով հեշտացնում է թշնամու յաղթական երթը դէպի Պետրոգրադ։ Պառակտումը աշխատանքի և կապիտալի միջև, դեմօկրատիայի և բուրժուազիայի միջև, բոլոր ձախակողմեան և աջակողմեան խմբերի միջև նորից և միանգամից լայնացել է սոսկալի մեծութեամբ։ Եւ չփոթված, ալեկոծված, [illegible] երկիրը մօտեցել է այնպիսի թուլութեան, անիշխանութեան, այնպիսի քայքայված կազմալուծման, որ արդէն շատ մօտ տեսնվում են ուրուականները ներքին թշնամու՝ սովի, խռովութեան, սոսկալի յուսահատութեան և կործանման։ Եւ չը կայ փրկութիւն, չը կայ ելք՝ բացի այն միակ ելքից, որ այժմ, իբրև անհնարին, հրաշք պէտք է համարել։

Այդ հրաշքը՝ միութիւնն է։

Բայց կը կատարվի՞ այդ հրաշքը։

Կասկածելի է։

Ցամենայն դէպս, թող նրանք, որոնք անհնարին են համարում ձեռք մեկնել աջակողմեաններին, գոնէ հաստատեն կարգ և իշխանութիւն երկրում, յեղափոխական տոկուն, ամուր կարգ։ Ներկայ անիշխանութիւնը կը գայ սրբելու և տանելու ամենքին—թէ ձախակողմեաններին, թէ աջակողմեաններին։

Հ. Ա.

ԿՈՎԿԱՍԻ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԹԻՒ

Վերջերս՝ վրաց կուսակցութիւններից մէկը մի խնդիր հրապարակ հանեց, որը ըստ ամենայնի արժանի էր ուշադրութեան և խրախուսանքի Կովկասի ազգութիւնները կազմող բոլոր տարրերի, հասարակական բոլոր խաւերի ու կուսակցութիւնների կողմից և որը, սակայն, ըստ երևոյթին անուշադրութեան է մատնված։ Այդ խնդիրը Կովկասի ազգութիւնների համագումարի հարցն է, որը եթէ ինչ-ինչ պատճառներով անհրաժեշտ էր համարվում յեղափոխութիւնից առաջ գումարել, այժմ աւելի քան հասունացած, կարևոր ու հրատապ պիտի համարել և ամեն կերպ աջակցել այդ խնդրին բարեյաջող լուծում տալու համար։

Կովկասի ազգութիւնների փոխադարձ անհամաձայնութեան, կասկածամտութեան, [illegible] կամ թշնամութեանը մեծ չափով նպաստել են այն հանգամանքները, որ նրանք շատ անգամ անծանօթ են եղել միմեանց ձգտումներին, ընդունակութիւններին, աշխարհահայեացքին, մի խօսքով մի ազգի ամբողջ կեանքը իր առաւելութիւններով, թերութիւններով ու ձգտումներով համարեա անծանօթ է եղել միւսին, և ընդհակառակը. ինչ վերաբերում է այն բանին, թէ ապա ինչով բացատրենք այդ փոխադարձ [illegible], իսկ շատ անգամ նաև թշնամութեան դրդապատճառները, դրան կը պատասխանենք, որ այդ բոլորին [illegible] են տալիս կամ որոշ ազգային հոսանքներ, իրանց քաղաքականութեան պատճառով, կամ թէ չէ՝ որոշ դէպքեր, դէպքեր և որոշ չափով նաև մամուլը։ Եւ ահա հիմնված վերոյիշեալների վրա, Կովկասի ազգութիւնները իրար մասին որոշ գաղափար, կարծիք են կազմել և ըստ այնմ էլ դէպի իրար սէր կամ թշնամութիւն, կասկած կամ համակրանք տածել։ Սա եղել է այն չարիքի արմատը, որ կոչվում է անհրաժեշտութիւն. և դա է եղել այն խոչընդոտը, որ չափազանց [illegible] նպաստել է Կովկասի յետամնացութեան ու աղքատութեանը, լարել է մի ազգ միւսի դէմ և դուռ է բացել անթիւ դժբախտութիւնների, տարակուսանքների ու թշնամութիւնների առաջ։ Հասկանալի է ուրեմն, որ նման պայմաններում անկարող

ԴԱՍԱՅԻՆ ՇԱՀԻ ՄԱՍԻՆ

(Գ. Վ. Պլեխանովի)

Նուիրվում է ռուս բանւոր դասի գիտակից տարրերին

Կան մարդիկ, շատ վեհամբարձ տրամադրված, որոնց զայրոյթն ես յարուցանում, երբ մատնանշում ես հասարակական դասերի և դասակարգերի շահերի վրա։ Նրանք համոզված են, որ պաշտպանել դասակարգային շահերը՝ կը նշանակէ ծառայել դասակարգային եսասիրութեանը, ժխտել անշահասիրութիւնը, ինքնազոհութիւնը և այլ լաւ զգացմունքները։ Ի հարկէ, ներկայ ժամանակում այդ տեսակ համոզմունքները կարող են ունենալ միմիայն միամիտ մարդիկ։

Բայց այն էլ յայտնի է, որ այդ միամիտների թիւը շատ շատ է մեր մէջ։ Առաւել շատ են նրանք ռուս ինտելիգենցիայի շարքերում։ Այդ պատճառով բաւական չէ արհամարհական կերպով ուսերը թափ տալ ի տես մարդերում այդ խորը արմատ գցած նախապաշարմունքի դասակարգային կամ դասային շահերի վերաբերեալ։ Երբեմնակի [illegible] ես վիճել նրանց հետ, որպէս զի [illegible] նրանց այն իդէալիստական, վերացական մշուշը, որի մէջ նրանք պահպանում են ինքնազոհութեան, անշահասիրութեան և այլ լաւ բաների գաղափարները։

Դեռ Ֆեյերբախը շատ նրբօրէն նկատել էր, թէ շատ էլ անհիմն չէ արդարութեան և շահի, ինտերեսի հակադրութիւնը, որովհետև յաճախակի արդարութիւնը համերաշխ է շահին։ Այս կամ այն ճնշումը զգացող մարդիկ ճակատագրով շահագրգռված են արդարութեան յաղթանակով, այն արդարութեան, որ դատապարտում է այդ ճնշումը և ձգտում է նրանից ազատելու։ Գերմանացի իմաստասէրը միայն անցողակի գցեց այդ նուրբ նկատողութիւնը։ Եթէ նա ուզենար նրան հիմնովին ապացուցել, այն ժամանակ բաւական կը լինէր դիմել նրան մարդկային բազմաթիւ ընկերութեանց պատմութեան, որտեղ գոյութիւն են ունեցել և գոյութիւն ունեն դասային կամ դասակարգային բաժանումները։

Երբ Ֆրանսիական հոգևոր և աշխարհական արիստոկրատիան, բարձր դասակարգը ձգտում էր պահպանել այն «հին կարգը», որը ի վնաս երրորդ դասակարգի (բուրժուազիայի կամ քաղաքային դասի) պահպանվում էր նրա բազմաթիւ արտօնութիւնները, այդ ժամանակ նա, բարձր դասը, գործադրում էր եսասիրութեան քաղաքականութիւնը, որ ոչ մի առնչութիւն չունէր ոչ անշահասիրութեան, ոչ արդարութեան հետ։ Իսկ երբ երրորդ դասակարգը (բուրժուազիա կոչվածը) ձգտելով վերացնել ի բան վնասակար արտօնակարգական մենաշնորհները՝ աշխատում էր ապացուցել «հին կարգերը», այն ժամանակ նրա քաղաքականութեան մէջ չը կար ոչինչ եսասիրական։ Նրա դասակարգային շահերը ներկայ դէպքում համապատասխան էին ամբողջ երկրի շահերին։ Ի զուր չէին բուրժուազիայի պաշտպանները հպարտօրէն ասում, թէ բուրժուազիան ընդգրկում է ամբողջ ազգը՝ բացի արտօնեալներից (այսինքն նրանց, որոնք, ինչպէս վերև ասացինք, գործադրում էին դասակարգային եսասիրութեան քաղաքականութիւնը)։ Եւ ի զուր չէր այն ամենը, որ կենսունակ էր, լուսաւորված և ազնիւ այն ժամանակվայ քաղաքակիրթ աշխարհում, այնքան մեծ ուշադրութեամբ հետևում էր ֆրանսիական բուրժուազիայի ազատագրական շարժմանը, խնդալով ողջունելով նրա ամենափոքր աջողութիւնները։

Եւ դրա նման երևոյթ էր, երբ Ռուսաստանում XIX դարում կալուածատիրական գիւղացիները ձգտում էին թօթափել ճորտութեան լուծը. նրանց այդ ձգտումը չէր հակասում ընդհանուր ժողովրդական շահերին։ Ընդհակառակը, կալուածատէրերի փորձերը, որ յաւերժացնեն այդ կարգերը, մինչև ուղն ու ծուծը վարակված էին դասակարգային եսասիրութեան ոգով և հակառակ էին ամբողջ պետութեան շահերին։ Ահա ինչու համար ամեն ազնիւ լուսաւորված մարդ, անգամ նրանք, որ պատկանում էին կալուածատիրական դասին, միահամուռ ողջունում էին կառավարութեան այն ձեռնարկութիւնները, որոնք, թւում էր թէ, ուղղված են գիւղացիներին ազատելու կալուածատիրական իշխանութիւնից։

Որպէսզի չը բազմացնեմ աւելորդ օրինակներով, ես ցոյց կը տամ միայն ներկայ գիտակից պրօլետարիատի վրա, որի ձգտումը՝ փոխարինել կապիտալիստական արդիւնաբերական կարգը սօցիալիստականով՝ թելադրված լինելով նրա դասակարգային շահերից, ամենևին չէ հակասում միևնոյն ժամանակ ամբողջ առաջաւոր մարդկութեան շահը։ Եւ հէնց այդ պատճառով խորապէս անարդար են այն չնաշխարհիկ իդէալիստները, որոնք արհամարհօրէն ժպտում են ամեն անգամ, երբ խօսք է բացվում բանւոր դասի դասակարգային շահի մասին։ Ցաճախակի այդ չնաշխարհիկ իդէալիստ դիմակի տակ թաքցված են լինում իշխող դասի եսասիրական շահերը։ Ցայտնի է, որ ներկայումս վեհամբարձ իդէալիստները աւելի յաճախ, քան չոր իդէալիստները, [illegible], իսկ բարձրաձայն քարոզում են ժուժկալութիւն՝ ջուր։

Այժմ նայենք առարկային միւս կողմից։

Պրօլետարիատի դասային շահը համապատասխանում է ամբողջ առաջաւոր մարդկութեան շահին։ Բայց սրանից ամենևին դեռ չի հետևում, որ բաւական է, եթէ արդիւնաբերողը զրկվի արդիւնաբերական գործիքներից, կապիտալից, դառնայ ընչազուրկ, պրօլետար, որ անմիջապէս հասկանայ լայն և ուղիղ կերպով իր դասի շահերը։ Պրօլետարիատի դասակարգային ինքնագիտակցութեան զարգացումը մի երկար պրօցես է, որի առաջին աստիճանները ահա ինչպէս են նկարագրված Մարքսի և Էնգելսի հռչակաւոր «Մանիֆեստում». «Սկզբում կռւում են առանձին-առանձին բանւորները, յետոյ մի ֆաբրիկայի բանւորները, յետոյ աշխատանքի մի ճիւղի բանւորները, մի տեղի բանւորները՝ մի բուրժուայի դէմ, որ անմիջապէս շահագործում է նրանց։ Նրանք իրանց հարուածները ոչ միայն ուղղում են բուրժուական արտադրական պայմանների դէմ, այլ այդ հարուածները ուղղում են և ընդդէմ արդիւնաբերութեան գործիքների. նրանք ոչնչացնում են օտարերկրեայ մրցող ապրանքները, կամ փշրում են մեքենաները, հրդեհում են ֆաբրիկաները. նրանք փորձեր են անում վերականգնել միջնադարեան բանւորի կորսված

Թիֆլիսի Ժողովարան
ԱՄԱՌԱՅԻՆ ՆՈՐ ԹԱՏՐՈՆ
Ուրբաթ, սեպտեմբերի 15-ին,
Հայ օպերետային խումբը
կը ներկայացնէ
Վերջին անգամ այս սեզօնում
ԱՐՇԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆ
Օպերետ 4 արար., Ու. Բ. Հաջիբէկօվի, Թարգ. Ա. Վրոյրի։
Մասնակցում են տ. տ. Աբղա, Ազատի, Սօֆի-Վարդիթեր, Սօֆիկ, պ.պ. Թորոսեան, Տալեան, Սանամեան և Ղազարեան։
Վալիի դերը կը կատարէ Ղազարեան
Սկիզբը ժամը ճիշդ 9-ին։
Տեղերի գները աւելացված են։
տ. 1122 1—1

էր իւրաքանչիւր ազգ առանձին վերցրած հանգիստ կեանք վարել և կուլտուրապէս առաջադիմել. իրար հետ շփվելու, իրար կարծիք, նպատակ հասկանալու ցանկութիւն միշտ եղել է, սակայն զանազան հա՞ գամանքներ, շատ անգամ մեզից անկախ, իրանց բնի մէջ խեղդել են նման ցանկութիւնները և ազգութիւնները կրկին հեռացել են իրարից, կրկին մեկուսացել։

Այժմ թէ ինչու պիտի ամեն կերպ նպաստել համակովկասեան համագումար հրաւիրելուն, բայց այժմ իւր առանց յետաձգելու, որովհետև հիմա, յեղափոխութեան հետևանքով, բազմաթիւ խնդիրներ են դրված հրապարակի վրա, որոնք պահանջում են Կովկասի բոլոր խաւերի գործօն մասնակցութիւնը և միահամուռ ու ներդաշնակ աշխատանքը։

Դաւիթ Մարութեան

„ՄՇԱԿԻ"
ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Խնուս, 13 սեպտ.

Մանազկերտի շրջանում լիակատար անիշխանութիւն է։ Կարաքիլիսէում մինչև Կոփ ռուսական տրանսպօրտներն անխղճօրէն կողոպտում են փախստականներին՝ աւերելով կացարանները, խլելով հնձված խոտը, ցանքսերը և բանջարանոցները։ Վերջերս ծեծեցին Նարդինի, Խասնէկի, Կանիգօրի բնակիչներին, որոնցից շատերը մինչև օրս հիւանդ պառկած են։

Օգոստոսի 18-ին միևնոյն օսերը, թւով 150 հոգի, զինված սառը զէնքերով, յարձակվեցին Խասնէկ գիւղի վրա, ծեծեցին բնակիչներին, կողոպտեցին նրանց և բռնաբարեցին կանանց։ Քաղաքների Միութեան ծառայողները, որոնք ներկայ էին այդ խժդժութիւնների ժամանակ, նոյնպէս ծեծվեցին և ազատվեցին մահից՝ փախուստով. Կանիգօր, Դունդուկ, Նորաշէն, Խասնէկ, Սուլթանլու գիւղերի բնակիչներին բռնութեամբ արտաքսում են իրանց շինութիւններից և, հալածելով վերջին փայտը, տանում են Մանազկերտ և Սանջակ ծախելու։

Դրութիւնը կրիտիքական է։ Պահանջվում է լուրջ ուշադրութիւն։ Անհրաժեշտ է զսպել անգութ մարդկանց ագահ ախորժակները։

Անդրանիկ Մխիթարեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԿՕՐՆԻԼՕՎԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

12 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Զինւորական մինիստրութեան նախկին կառավարիչ Սավինկովը «Воля Народа»-ում տպած խմբագրութեան ուղղված նամակի մէջ առարկում է «Дѣло Народа» լրագրում լոյս տեսած Չերնովի յօդուածների դէմ, որոնք կրում են «Երկու բարեկամների խօսակցութիւն» և «Վարագոյրը բարձրանում է» խորագրերը։

«Ես անյարմար եմ գտնում ինձ համար—ասում է Սավինկովը,—բանակռւի մէջ մտնել Չերնովի հետ, բայց իմ պարտականութիւնն եմ համարում, ամեն տեսակ թիւրիմացութիւններից խուսափելու համար, յայտնել հետևեալը.

«1) Կօրնիլօվի հետ իմ ունեցած խօսակցութեան ժամանակ օգոստոսի 27-ին հեռախօսով՝ ներկայ էր ոչ միայն Մակլակօվը, այլ և ուրիշ շատ վկաներ, օրինակ Պալչինսկին, գեներալ Բարանովսկին, զինւորական մինիստրի օգնականներ Եակուբովիչը և Իզմայլ Թումանովը, հիւսիսային զօրաճակատի կոմիսար Ստանկեւիչը և ուրիշները, խօսակցութիւնը կարդաց Ժամ. Կառավարութեան մէջ մինիստր-նախագահը Չերնովի ներկայութեամբ և առարկութիւններ չը լսեց։

«2) Հեծեալ զօրամասին ես պահանջեցի գլխաւոր զօրահրամանատարից մինիստր-նախագահի յանձնարարութեամբ՝ Պետրօգրադում պատերազմական դրութիւնը իրագործելու համար, որը արդիւնք էր ռազմագիտական անհրաժեշտութեան ենթարկել Պետրօգրադի զինւորական շրջանը, Ռիգայի անկումից յետոյ, գերագոյն զօրահրամանատարին. Պետրօգրադը պատերազմական դրութեան մէջ յայտարարելու նախադիծը, որքան ինձ յայտնի է, հաւանութիւն գտաւ կառավարութիւնից, որի անդամների թւում էր և Չերնովը։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ հեծեալ զօրամասը, նշանակվելով կառավարութեան կարգադրութեան ներքոյ, պէտք է պաշտպանէր նրան ամեն տեսակ ոտնձգութիւններից, ում կողմից էլ որ այդ լինէր, ինչպէս օրինակ միացեալ զօրաբաժինը պաշտպանում էր կառավարութեանը յուլիսի սկզբին՝ մեծամասնականների ոտնձգութիւններից։

«Լվովի ունեցած բանակցութիւններին Կօրնիլօվի և Կերէնսկիի հետ՝ ես չեմ մասնակցել և նոյն իսկ չը գիտէի էլ այդ մասին, այդ բանակցութիւնները ինձ յայտնի դարձան միայն օգ. 26-ի երեկոյեան Կերէնսկիից և օգ. 27-ի ցերեկով Կօրնիլօվից՝ հեռախօսով։

«4) Ֆիլօնէնկօյի խօսակցութիւնը Կօրնիլօվի հետ վերաբերել է, ինչպէս այդ բացատրեցին Ֆիլօնէնկօն և Կօրնիլօվը, ոչ թէ որեւէ մէկի անհատական թեկնածութեանը, այլ պետական պաշտպանութեան փոքր կօմիտէին կամ ներկայումս գոյութիւն ունեցող դիրեկտօրիային, միայն անդամների այլ կազմով. այդ տեսակ դիրեկտօրիայի անհրաժեշտութեան միտքը յարուցել էին դեռ առաջուց կառավարութեան անդամներից շատերը»։

«Воля Народа»-ն բաւ էութեան չէ խօսելու Սավինկովի նամակի մէջ շօշափված հարցի մասին, մինչև երեան գան բաւականին լիակատար օբեկտիվ տուեալներ։

ԿԱԶԱՆ.—Հարաւ-արեւմտեան զօրաճակատային կազմակերպութիւնները, գլուխ ունենալով Կիեւի պատգամաւորների խորհրդին, հրաժարվեցին քննիչ Մասնաժոգովին յանձնել կալանաւորված գեներալներ Դենիկինին, Մարկովին և Էլսներին, համաձայնելով յանձնել նրանց միմիայն զինւորա-յեղափոխական դատարանին։ Վճռված է մի շաբաթով յետաձգել զինւորա-յեղափոխական դատարան նշանակելը՝ այդ գեներալներին դատելու համար, որպէսզի հարցը լուծվի յանուն արդարութեան։

ՕԴԵՍՍԱ.—Կերէնսկին հրամայեց գեներալ Մարկսին նորից ստանձնել շտաբի կառավարչի պաշտօնը։ Հրամանը գոհունակութեամբ ընդունվեց դեմոկրատական և զինւորական շրջաններում։

ԿԱԶԱՆ.—Սեպտ. 12-ին գեներալ Կօրնիլօվը և ապստամբութեան գործի առիթով ձերբակալված կալանաւորները, յատուկ գնացքով, առանձին կօմիտէի և պահակախմբի հսկողութեամբ, տարվեցին Բըխով քաղաքը, ուր այսուհետև պահվելու են յատուկ պատրաստված շինութեան մէջ։ Բացի Կօրնիլօվից՝ Բըխով ուղարկվեցին 20 մարդ, որոնց թւում գեներալներ Ռոմանովսկին, Լուկոմսկին և փոխ-գնդապետ Սախարովը։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ՓԱՐԻԶ, 13 սեպտ.—Լրագիրները միաբերան յայտնում են, թէ կենտրոնական պետութիւնների պատասխանները պապի պաշտօնագրին՝ լի են անորոշ խօսքերով և անորոշ են, մատնանշում են, թէ Գերմանիան և Աւստրիան ցանկանում են խուսափել որոշ հարցերին պատասխանելուց։ Բելգիայի մասին [illegible] լռութիւնը պահպանելը ամենից լաւ է գնահատում այդ վաւերագրերը։

Հռոմից ստացված տեղեկութիւնների համաձայն, Վատիկանում հիասթափված են այդ պատասխաններից, նրանց մէջ որոշ յայտարարութիւններ չը տեսնելուց, մանաւանդ Բելգիայի և առ հասարակ գրաւված հողերի վերաբերմամբ։

ԺԱՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

ՊԵՏՐՕԳՐԱԴ, 13 սեպտ.—Երէկ, գիշերով, Ձմեռային պալատում, Կերէնսկիի նախագահութեամբ կայացաւ Ժամ. Կառավարութեան նիստը։

Ներկայ էին Տերէշչենկօն, Նիկիտինը, Վերխովսկին, Վերդերեվսկին, նաև Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետ Նեկրասովը։

Նիստի սկզբում Կերէնսկին զեկուցում տուեց զօրաճակատի դրութեան մասին և մատնանշեց, թէ նա առանձին երկիւղ չէ ներշնչում, յետոյ գեներալ Կօրնիլօվի գործի վերաբերմամբ սկսված քննութեան ընթացքի մասին, որի վերաբերմամբ նախնական քննութիւն աւարտելուց յետոյ՝ վճռված է հրապարակել պաշտօնական հաղորդագրութիւն։

Լսվեց Նեկրասովի զեկուցումը ֆինլանդական սէյմի ինքնակամ գումարման հարցի մասին։ Ժամ. Կառավարութիւնը վճռեց այդ հարցի մասին [illegible]։

Վերջում շօշափվեց սառաւորական խորհրդակցութեան հարցը։ Որոշ վճիռներ չը կայացվեցին։

ՍՈՒԽՈՄԼԻՆՈՎԻ ԳՈՐԾԸ

ՊԵՏՐՕԳՐԱԴ, 13 սեպտ.—Երէկ նիստը բացվեց նախագահ Տագանցեվի ճառով, որ տևեց մօտ 5 ժամ, որից յետոյ ատենակալները առանձնացան խորհրդակցելու։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԿԻԵՎ, 13 սեպտ.—Երեկվայ նիստում Գրուշեվսկին ողջունեց Ժամ. Կառավարութեան քայլը, որ ուղարկել է համագումարին իր ներկայացուցչին և յոյս ունի, թէ դրան կը հետևեն բէալ ձեռնարկութիւններ, որովհետև ամենքն են ցանկանում, որպէսզի ռուսական պետութիւնը ժողովուրդների բանտից փոխվի ժողովուրդների պալատի։

Սլավինսկին Ժամ. Կառավարութեան անունից ասաց. «Մինիստր-նախագահը իր մեկնելուց առաջ ասաց ինձ. «Հաղորդեցէք իմ անունից համագումարին, որ ազատ Ռուսաստանը կարող է լինել միմիայն [illegible]ան։ Այն ամենը, ինչ ասացի, որ երկար տարիներ աշխատել եմ ոչ միայն ուկրոյն, այլ և Ռուսաստանի բոլոր ժողովուրդների բարօրութեան համար, ես համակարծիք եմ սկզբից մինչև վերջ։ Եթէ Ռուսաստանի ժողովուրդները չը հաւատային, որ այս ժամը պետութեան մահացու վտանգն է, չէին էլ հաւաքվի այստեղ։ Մարսեան դաշտում եղբայրական գերեզմանատանը թաղված են Ռուսաստանի բոլոր ժողովուրդների զաւակների ոսկորները, որոնց արիւնով գնվեց ազատութիւնը Պետրօգրադի փողոցներում։ Ոչ մի ժողովուրդ իրաւունք չունի ասել, թէ նա ինչ-որ բան է տուել ուրիշին։ Սա պէտք է դրվի Ռուսաստանի նոր կազմի հիմքի մէջ։ Ճիշդ այնպէս, ինչպէս գոլորշիանում է կենտրօնացման անանկ ոգին, հարկաւոր է որպէսզի Ռուսաստանի ժողովուրդների մէջ չը մնայ անվստահութիւնը դէպի ամեն մի կառավարութիւն, որ խոր արմատներ է ձգել մռայլ անցեալի ժամանակից»։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

ԱԹԷՆՔ, 13 սեպտ.—Ճանինում սեպտ. 9 ին բարձրացրին յունական դրօշակ. իտալական դրօշակը իջեցրին։ Քաղաքը յանձնելու արձանագրութիւնը ստորագրվեց սեպտ. 10-ին։

ՆԻՒ-ԵՈՐԿ.—Միացեալ Պետութիւնների և Եապոնիայի միջև կապվեց լիակատար համաձայնութիւն՝ պատերազմի մէջ փոխադարձ գործակցութեան համար՝ ընդդէմ Գերմանիայի։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

12 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պետրօգրադը դադարեցնելու առանձին խորհրդակցութիւնը մշակել է մանրամասն ծրագիր, որի համաձայն առաջին հերթին մայրաքաղաքից հեռացվելու են նպաստ ստացող փախստականները, ապա առանց որոշ-պաշտօնի անձինք։

Նախագծված է փոխադրել լազարէթները, հիւանդանոցները և բարեգործական հաստատութիւնները։

Երէկ ժամը 6-ին վերադարձաւ կայանից մինիստր-նախագահ և գերագոյն զօրահրամանատար Կերէնսկին։

Ֆինլանդական գեներալ - նահանգապետ Ստախովիչն ազատվում է, համաձայն յայտարարութեան, իր պաշտօնից։ Պետական Դումայի անդամ Նեկրասովը նշանակվում է ֆինլանդական գեներալ-նահանգապետ։

Բանւ. և զինւ. պատգամաւորների խորհրդի կենտր. գործ. կօմիտէն 119 ձայնով ընդդէմ 101-ի ընդունեց բանաձև, որը ընդունում է կօալիցիօն իշխանութեան սկզբունքը, սակայն առանց կադէտների մասնակցութեան։

ՓԱՐԻԶ.—Արգէնտինում սկսվել է երկաթուղային գործադուլ։

Համաշխարհային Պատերազմ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՕՐԱՃԱԿԱՏ

13 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտ. հաղորդ.

Կովկասեան ռազմաճակատի վրա էական բան չը կայ։

ԱՒՍՏՐՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶՕՐԱՃԱԿԱՏ

12 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտ. հաղորդ. Կայանից.

Ռիգայի ուղղութեամբ, Պսկովի խճուղուց հարաւ, հակառակորդի հետախոյզ զօրամասերը վանվեցին մեր ուղեկալների մօտից։

Սեպտ. 10-ին Գուսեատինի շրջանում պրապօրշչիկ Եանչէնկօն իջեցրեց թշնամու մի աէրօպլան։ Միևնոյն շրջանում օդագնացներ Կազակօվը և Կերէնսկին յարձակում գործեցին թշնամու 4 աէրօպլանի վրա, որոնցից մէկն ընկաւ օդագնաց Շիրինսկիի աէրօպլանի յարձակումից, որը և իր հերթին փչացաւ և այլ ևս չը մասնակցեց կռւին։ Ռոտմիստր Կազակօվը շարունակեց կռիւը երեք աէրօպլանների դէմ և ստիպեց նրանց հեռանալ դէպի թշնամու ներքին դիրքերը։

Բարանովիչի ուղղութեամբ թշնամու օդագնացները յարձակում գործեցին աէրօստատի վրա և այրեցին տաք հեղուկով։ Նիշից հիւսիս-արևելք մենք բռնեցինք թշնամու մի աէրօպլան, որի երկու օդագնացները գերվեցին։

Սեպտ. 1-ից հակառակորդի գործունէութիւնը Բալտիկ ծովում կենդանութիւն ստացաւ, որ արտայայտվում է գլխաւորապէս օդային հետախուզումների և սուզանաւերի գործողութիւնների մէջ, որոնք աշխատում են դժուարացնել մեր սուզանաւերի շարժումները Կուրլանդիայի ափի և Իրբէնի նեղուցի մօտ։ Մեր ականանաւերը, սուզանաւերը և աէրօպլանները արգելք են լինում թշնամու նաւատորմի մասերին՝ մտնել մեր ջրերը։ Վերջին երկու օրում նկատվում է կենդանութիւն Ռիգայի մօտի Կուրլանդական ափում։ Ֆիշերներով նկատելի են լուսարձակների ճառագայթներ, կրակներով նշաններ տալ։ Լոյս սեպտ. 12-ի գիշերը Իրբէնի նեղուցի ափի վրա թշնամու մի «ցէպպելին» նետեց մօտ 40 ռումբ։

ԱՆԳԼՕ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԶՕՐԱՃԱԿԱՏ

13 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Պաշտ. հաղորդագրութիւն.

Երէկ առաւօտեան թշնամին թնդանօթային կրակի պաշտպանութեամբ երկու կարճատև հարուած հասցրեց Մօնշիլէ-Պրէյկի շրջակայքում՝ Արրաս-Դուէ երկաթուղագծից հարաւ, բայց վանվեց, թողնելով շատ սպանվածներ։

Մեր պահակախմբերը օրվայ ընթացքում գործեցին եռանդով և վերադարձան գերիներով։

Թշնամու 8 աէրօպլաններ ընկան, 6-ը ստիպված էին իջնել։ Մենք կորցրինք 3 աէրօպլան։

ՓԱՐԻԶ.—Պաշտ. հաղորդագրութիւն.

Էն գետի ռազմաճակատի վրա երկուստեք թնդանօթաձգութիւն է։ Մենք կանգնեցրինք թշնամու անակնկալ յարձակումը Մաասի աջ ափում։ Թշնամին [illegible] Մաասի ձախ ափում և փորձեց յարձակումներ գործել Բօմօնի մօտի խրամատների վրա, բայց, չը նայած որ մեծ չափով գործադրում էր հրաձգութիւն, ետ մղվեց մեծ կորուստներով։

Վօգեզներում պահակախմբերի ընդհարումներ են։

Երէկ մենք իջեցրինք գերմանական 3 աէրօպլան։

ՕԴԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԱՆԳԼԻԱՅԻ ՎՐԱ

11 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Երէկ թշնամու աէրօպլանները յարձակում գործեցին Անգլիայի արևելեան ափի վրա, մասնաւորապէս Կենտի և Էսսէքսի վրա։ Մի քանի աէրօպլաններ բարձրացան Թէմզայից վեր և յարձակում գործեցին Լօնդօնի վրա։ Սպանվեցին 6, վիրաւորվեցին 26 հոգի։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԶՕՐԱՃԱԿԱՏ

13 սեպտեմբերի

Սէրէտ լեռնից հարաւ-արևմուտք, Օնուֆրա լճի մօտ ժամը 17-ին հակառակորդը սկսեց ուժեղ թնդանօ-

---

ղութիւնը» (այն, ինչ մեզ մօտ յայտնի է համբերութիւն անունով։ Պ. Զ.)

Զարգացման նախնական այս աստիճանի վրա ստէպ պատահում է, որ յայտնի ճիւղի բանւորներ առաջադրում են այնպիսի պայմաններ, որոնք համաձայն չեն միւս ճիւղերի բանւորների շահերին։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ ձգտելով իրագործել իրանց պահանջները, նրանք պաշտպանում են միայն իրանց խմբական շահերը, որ հակառակ է իրանց սեփական դասային շահերին՝ ընդհանրապէս վերցրած՝ և նմանապէս, գրեթէ միշտ, ամբողջ ժողովրդի շահերին։ Այս դէպքում նրանք վարվում են եսասիրաբար։

Հեշտ է հասկանալ և այն, որ երբ բանւորները փչացնում են մաշինները, հրձիգում են գործարանները և, ընդհանրապէս ասած, կանգնեցնում են արդիւնաբերական ույժերի զարգացումը, նրանք դրանով ընդհանրապէս վնասում են երկրը, և ամենից առաջ իրանց։ Որքան արագ են երկրի մէջ զարգանում արդիւնաբերական ույժերը, այնքան հեշտ է բանւոր դասին համախմբվել, կազմակերպվել և առ հասարակ մղել իր գոյութեան կռիւը։

Եթէ դա ճիշդ է, ես հաւատացնում եմ ընթերցողին, որ անհերքելի է. պարզ է այն, որ գիտակից բանւորները պարտաւոր են նախազգուշացնել իրանց յետամնաց ընկերներին այն ցոյցերից և գործողութիւններից, որոնք արմատ ունենալով նրանց անգիտակցութեան մէջ և լինելով արտադրութիւն նրանց եսասիրական խմբական շահերի, վնասակար են ամբողջ երկրի բարօրութեանն ընդհանրապէս և պրօլետարիատին, որպէս մի ամբողջի, մասնաւորապէս։ Ի հարկէ, նման նախազգուշացումներ կարող են առաջ բերել անբաւականութիւն բանւորական գիտակից տարրերի կողմից. վարժապետի դերը միշտ շնորհակալ դեր չէ լինում, իսկ ծափահարութիւններ յաճախակի ստանում են ամբոխավարները, դեմագօգները։ Բայց դա չէ արգելում դեմագօգին մնալ արհամարհված արարած, իսկ վարժապետին՝ օգտակար մշակ մարդկութեան համար։

Ես հաւատացած եմ, որ ռուս պրօլետարիատի միջև կայ բաւականաչափ գիտակից տարր, որ ընդունակ է իր վրա վերցնել ողնել, բայց ոչ միշտ շնորհակալ պարտք՝ զգուշացնելու մեր բանւորներին այն սխալներից, որ վերջին հաշւով վնասակար են նոյն բանւոր դասին։

Աշխատանքի առանձին ճիւղերի բանւորները յաճախ առաջադրում են այնպիսի պայմաններ, որոնց կատարումը միայն կաւելացնէր ներկայ տիրող տնտեսական քայքայումը։ Այդ քայքայումը մեզ բոլորիս վնասակար է. ի զուր չենք ասում, թէ բանւորութեան շահերը համերաշխ են ամբողջ երկրի շահերին։ Վնասելով ամբողջ երկիրը, առանձնակի բանւորական խմբերի եսասիրական պահանջները ստէպ վնաս են հասցնում բանւոր դասին։ Տնտեսական քայքայումը անդամալոյծ է անում արդիւնաբերութիւնը, իսկ այնտեղ, ուր անդամալոյծ է արդիւնաբերութիւնը և առևտուրը՝ մինչև վերին աստիճանի ընկնում է և բանւոր ձեռքի առաջարկը։ Ի հարկէ, կարելի է ասել, և դեմագօգները ասում էլ են, թէ գործարանը իրան տնտեսութեան կը վերցնի կանգ առած ֆաբրիկանները։ Բայց տնտեսական քայքայումը չէ խնայում և գործարանին. նա ճակատագրական կերպով հասնում է կատարեալ դատարկման։ Իսկ ինչ կարող է ձեռնարկել պետութիւնը՝ դատարկ սնդուկով։

Ամեն երկրի հարստութիւնը ստեղծվում է նրա բնակչութեան աշխատանքով։ Եթէ բանւորները իրանց դասային շահերի պաշտպանութեան պատրուակով իջեցնում, պակասեցնում են իրանց աշխատանքի չափը, այն ժամանակ նրանք, վնասելով ամբողջ երկիրը, նմանապէս շատ բնիկ են անում վնասել սեփական դասը։

Վերցնենք օրինակ. Դոնեցի շրջանում սարսափելի ընկել է քարածխի արտադրութեան չափը՝ բանւորների աշխատանքի արտադրութեան չափը պակասելուց։ Դա ամենքին յայտնի է։ Բայց քարածուխը շատ արդարացիօրէն կոչել են արդիւնաբերութեան հացը։ Որքան պակաս լինի այդ հացը ռուս արդիւնաբերութեան համար, այնքան նա դանդաղ կը քայլէ, այնքան արագ կաճի տնտեսական քայքայումը և այնքան աւելի շատ կը հանդիպի մեր բանւորութիւնը անգործութեան։ Դոնեց գետի շրջանում այժմ մտցված է ութժամեայ բանւորական օր։ Իսկ իրապէս բանւորները ութ ժամից էլ պակաս են աշխատում։ Նրանց կարծիքով՝ այդպէս վարվելով նրանք պաշտպանում են իրանց դասային շահերը։ Դա խոշոր սխալ է. վերև բերված պատճառով նրանք վնասում են իրանց, և ամբողջ բանւոր դասին և ամբողջ Ռուսաստանին։

Անգլիական բանւորները վճռել են, որ ձգտելով 8-ժամեայ աշխատանքի, նրանք պիտի 8 ժամից աւելի աշխատեն մինչև ներկայ պատերազմի վախճանը։ Դրանով նրանք ապացուցին, որ իրանք կարող են աւելի լայն նայել իրանց դասային շահի վրա։ Եթէ Գերմանիան յաղթէ Անգլիային և նրա դաշնակիցներին, այդ հանգամանքը վատ ազդեցութիւն կունենայ անգլիական արդիւնաբերութեան վրա, ուրեմն և անգլիական պրօլետարիատի շահերի վրա։ Հասկանալով այդ, անգլիացի բանւորները վճռեցին զոհել կարճատև ներկայ ժամանակի շահը յանուն անհամեմատ երկարատև ապագայի շահերի։ Նրանք վարվեցին կատարելապէս խելացի կերպով։

Ապա ինչու ռուս բանւորները չը հետևեն անգլիացոց օրինակին. չէ որ Գերմանիայի յաղթութիւնը ռուս արդիւնաբերութեանը սպառնում է աւելի ծանր հետևանքներով։

Ամփոփենք. ուրիշ բան է պրօլետարիատի շահը և ուրիշ բան՝ այդ շահի վատ ըմբռնումը։ Ուրիշ բան է ամբողջ բանւոր դասի շահը, այլ բան է նրա առանձին խմբերի շահը։ Ուրիշ բան է ներկայ կարճատև ժամանակի շահը, այլ բան է աւելի շատ երկարատև ապագայի շահը։

Թարգմ. Պ. Զ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՌՈՍՏՕՎԻ ԿԱԴԵՏՆԵՐԸ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժող. Ազատութեան Կուսակցութեան Ռոստովի կոմիտէն իր սեպտ. 1-ի նիստում խորհրդակցութիւն ունեցաւ ներկայ քաղաքական դրութեան մասին և հետևեալ որոշումները կայացրեց.

«Վերջին դէպքերի առիթով հետզհետէ յաճախում են կոչերը յեղափոխութիւնը փրկելու և մեղադրանքները հակայեղափոխականութեան մէջ: Այս պատճառով Ժող. Ազատութեան Կուսակցութեան Ռոստովի կոմիտէն պարտք է համարում իր հայեացքն արտայայտել այս հարցի մասին:

«1) Ռուսական յեղափոխութիւնը 1917 թւի փետրվարի վերջերին մեծ յաղթանակ տարաւ. նա տապալեց առելի հին ինքնակալական բիւրօկրատական կարգը: Յեղափոխութեան առեղծած ժամանակաւոր կառավարութիւնը հրատարակեց մերձաւորագոյն գործունէութեան ծրագիրը, որ լիովին համապատասխանում էր յեղափոխութեան միջոցով ազատութեան շղթաները խորտակած ռուս ժողովրդի վաղեմի ցանկութեան և ձգտումներին: Իսկ նոր կարգի սահմանումը՝ փոխանակ յեղափոխութեան տապալած հին կարգի՝ կազմում է անկասկածելի իրաւունք ռուսաց երկրի իսկական և լիազօր տիրոջ, Սահմանադիր Ժողովի, որ պէտք է հրաւիրվի ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնտուութեան միջոցով: Այս հիման վրա կոմիտէն կարծում է, թէ որևէ պրօպագանդա, որևէ փորձ յօգուտ հին կարգի վերականգնման և հակառակ ժամանակաւոր Կառավարութեան ծրագրի, նոյնպէս և որևէ յափշտակում Սահմանադիր Ժողովի իրաւունքների, հանդիսանում են հակայեղափոխական գործողութիւններ:

«2) Կոմիտէն գտնում է, որ փետրվարի յեղափոխութիւնը բացառապէս քաղաքական բնոյթ է կրում, բայց յեղափոխութեան բերած ազատութիւնները ճանապարհ են բաց անում լայն հասարակական ռէֆորմների առաջ, կարգաւորված օրէնսդրութեան միջոցով: Կոմիտէն կարծում է նոյնպէս, որ այսպէս կոչված «յեղափոխութեան խորացումը», որ ձգտում է իրաւունքի բռնի գրաւումով առաջ բերել սօցիալական յեղաշրջում և բռնի կերպով սօցիալիստական կարգ հաստատել, ինքն ըստ ինքեան դատապարտված է անյաջողութեան, և միևնոյն ժամանակ այդ գործելակերպը հասցնում է անիշխանութեան և սպառնում է բոլորովին քայքայել երկրի տնտեսութիւնը և նրա իրաւական և կուլտուրական կեանքը: Ի մեծ դժբաղդութիւն՝ այս սպառնալիքն արդէն սկսել է իրականանալ: Կոմիտէն համոզված է, որ քաղաքացիական պատերազմը կը լափէ յեղափոխութեան բոլոր նուաճումները և ազատութեան հեղեղների մէջ կը խեղդէ մեր նոր, դեռ չամրապնդված ազատութիւնը. ուստի կարծում է, որ անհրաժեշտ է բուռն կերպով բողոքել յեղափոխութեան խորացման դէմ, որ թելադրանք է սօցիալիստական ցնորքների, հարկաւոր է բողոքել՝ փրկելու համար յեղափոխութեան նուաճումները, և ինտերնացիօնալիզմի փորձ, որ կատարվում է քաղաքացիական պատերազմի առաջն առնելու համար, ամենևին հակայեղափոխական գործ չէ, այլ հանդիսանում է ամեն մի քաղաքացու պարտականութիւնը, որի համար թանգ են յեղափոխութեան իսկական նուաճումները:

«3) Կոմիտէն կարծում է, թէ ներկայ խռովայոյզ պայմաններում և պատասխանատու ժամանակում անհրաժեշտ են լիակատար համաձայնութիւն, երկրի բոլոր կենդանի ուժերի միաբանութիւն, ընդհանուր աշխատանք և ընդհանուր զոհաբերութիւններ, և ընդհակառակն անթոյլատրելի է համարում կուսակցական ֆանատիկոսութիւնից բղխած անհիմն մեղադրանքները, որոնք անջատում և երկպառակութիւն են ձգում. յատկապէս անթոյլատրելի է համարում անսահմանօրէն տարածելը «հակայեղափոխութիւն» բառը, որ գրգռմունք է առաջացնում խաւար ժողովրդի մէջ»: («Баку»).

«ԱՄԵՆՕՐԵԱՑ ՀԱՑԸ»

Այս վերնագրի տակ «Русское Слово» լրագրում (№ 206) տպագրված է Ալ. Եաբլոնովսկիի յօդուածը, որի մէջ կենդանի պատկերացված է երկրի պարենաւորման սպառնալից դրութիւնը: Նկարագրութիւնը լիովին համապատասխանում է նաև մեր Կովկասի իրական վիճակին:

Մօսկվայի պ. քաղաքագլուխը խորհուրդ է տալիս քաղաքացիներին՝ իրանց ընտանիքները տեղափոխել հացառատ նահանգները և այս միջոցով ազատվել պարենաւորման տագնապից:

— Եթէ ուզում էք ձգովի չայ խմել՝ գնացէք Կիեվ:

— Եթէ կամենում էք ձկնաթան ուտել՝ ուղևորվեցէք Կօստրօմա կամ Նիժնի:

Բայց յամենայն դէպս յիշեցէք այս կանոնը.

Ոչ թէ հացն է տարվում ժողովրդի մօտ, այլ ժողովուրդն է տարվում հացի մօտ:

Միտքս եկաւ Պօշեխոնի պատմութիւնը*) գիւղացու և կովի մասին: Գիւղացու տան կտուրի վրա խոտ էր բուսնում: Գիւղացին, չը գիտենալով ինչպէս այդ խոտը կովին ուտեցնէ, ամեն օր կովը կտուրն էր բարձրացնում:

Ի հարկէ, պօշեխոնցին այսպէս պիտի վճռէր այս պօշեխոնական խնդիրը:

Բայց համաձայնեցէք, որ մենք շատ էլ հեռու չենք պօշեխոնցի գիւղացուց:

Այս վեց ամսվայ ազատութեան կարգերի ժամանակ մենք ոչ մի խելացի ելք չը գտանք մեր մարդկանց [illegible] վիճակից, և ընդհանուր կերպով կարելի է ասել, որ թէ Պետրօգրադում, թէ Մօսկվայում և թէ բոլոր մեծ քաղաքներում մարդիկ զբաղված են միայն՝ կովը կտուրը բարձրացնելով:

Պատկերը լիակատար դարձնելու համար աւելացրէք, որ այս պօշեխոնական «խելքի» համար մենք տարեկան 500 միլիօն րուբլի ռոճիկ ենք վճարում մեր պարենաւորման ամենակալներին:

Մի քիչ թանգ է այս անշուշտ, բայց մենք այնքան ենք վարժվել մեր ամենակալների անընդունակութեան, որ նրանցից աւելի չենք էլ պահանջում:

Եւ իրօք, ինչ արինք մենք քաղաքացիական ժողովրդի չարչարանքները թեթևացնելու համար և որևէ կերպով լաւացրինք դրութիւնը, քան որ էր Նիկոլայի ժամանակ:

Չեմ թագցնում, Նիկոլայ Թագաւորի ժամանակ ինձ միշտ այնպէս էր թւում, թէ ռուսական պարենաւորման գործը վարում է մի չար յիմար, որ նշանակված է միայն այն նպատակով, որ երկրում առաջ բերէ ընդհանուր զայրոյթ և կոյր կատաղի անելութիւն:

Իսկ ներկայ յեղափոխութեան և հասարակութեան ժամանակ ես այս կարգի մէջ միայն մի փոփոխութիւն եմ տեսնում:

— Յիմարը կարծես աւելի չարացաւ:

Եւ յիմարի:

Նա Ռուսաստանը ծածկեց մաքսատնային անջրպետներով:

Նա սպանեց հացի առևտուրը:

Նա կռւեցրեց գիւղը քաղաքի հետ:

Նա ծագեցրեց անծայր, անսահման կաշառակերութեան սխալմեր:

Նա աւելի բազմացրեց կողոպտիչների դասը և կրկնապատկեց ու եռապատկեց հարստահարիչների թիւը:

Եւ երբ արդէն քաղաքներում սովը սկսեց խուզարկել ճանապարհային չեմօդանները և լկտի յանդգնութեամբ սկսեց քաղցած մարդկանց ձեռքից խլել իբրև «կոնտրաբանդ» թխած հացի բլիթը, ձեռքի ապարկով ալիւրը, զամբիւղով միսը:

Թոյլ տուէք դրութիւնը պարզ պատկերացնելու համար բերեմ մի քանի օրինակ մեր պարենաւորման տխմարութեան:

(Վերջը միւս անգամ)

Հ. Ժ. Կ. Խմբագր. Մասնաժողով

*) Պօշեխոնիէ՝ գաւառ և քաղաք Եարոսլավլի նահանգում: Գաւառի ժողովրդի մասին ռուս ժողովրդի մէջ պատմվում են անհամար «ծաղրութիւններ», ինչպէս մեր մէջ պատմվում են համշէնցիների մասին: Ծ. Թ.

թային կրակ: Ժամը 15-ին սաստ թշնամու հետևակ զօրագնդերը խիտ շարքերով առաջացան և խուժեցին մեր խրամատները, բայց հակայարձակումով վանվեցին և մեր դրութիւնը վերականգնվեց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ «ՄՇԱԿԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Արձագանք տալով «Մշակի» № 129-ի առաջնորդողին՝ մեր բաժանորդներից հետևեալներն ուղարկել են մեզ թէ իբրև լրացուցիչ բաժանորդագին 1917 թ. և թէ իբրև մեկանուագ նուէր հետևեալ գումարները.

1) Նամանգանից, «Տարօն» առևտր. տուն 10 ր., 2) Թիֆլիսում, Միք. Կրիտեան 25 ր., 3) Պետրօգրադից, Ա. Պ. Ունանեան 50 ր., 4) Ղզլարից, Զաք. Նարիմանեան 10 ր.:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Լևոն Մանթաշեանը Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկ. տրամադրութեան տակ է դրել 400,000 րուբլի՝ գիւղատնտեսական դպրոցներ բանալու, իսկ 200,000 ր. գիւղատնտեսական գործիքներ գնելու և գիւղացիներին բաժանելու:

◆ Երէկ Սիօնի տաճարում ռուս հոգևորականութիւնը կատարեց մաղթանք՝ ռուս հասարակապետութեան և զօրքին յաղթութիւն շնորհելու: Մաղթանքներ կատարվեցին նաև Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում, որտեղից հոգևորականութիւնը գնաց միացաւ Սիօնի տաճարի հանդէսին:

◆ Երէկվայ տօնի պատճառով ռուս թերթերը այսօր լոյս չեն տեսնի:

◆ Բնակարանային ճգնաժամի պատճառով քաղաք. վարչութեանը առաջարկված է ցուցակագրել բնակարանները և ռեկվիզիցիայի ենթարկել երկրորդական հիւրանոցները: Այդ առաջարկութիւնը յանձնված է բնակարանային յանձնաժողովի քննութեան:

◆ Պետրօգրադի առաջին պօլիտեխնիկական դասընթացների վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Ներկայումս ժող. լուսաւորութեան մինիստրութիւնը ներկայացրել է լիակատար իրաւունքներ Պետրօգրադի առաջին պօլիտեխնիկական կուրսերին, որ հանդիսանում է առաջին տեխնիկականը ոչ միայն Պետրօգրադում, այլ և ամբողջ Ռուսաստանում: Դասընթացներում, որ բացված են 1908 թւից, գոյութեան 9 տարվայ ընթացքում սովորել են 4000 աշակերտ, որոնք գրեթէ բոլորը իրանց ստացած տեխնիկական գիտութեանը գործադրում են հայրենիքի օգտին, այս համաշխարհային պատերազմում, ինչպէս թիկունքում, այնպէս անմիջապէս ռազմաբեմում, յատուկ զօրքերի մէջ: Տեխնիկական չորսամեայ դասընթացն աւարտողը, տրված իրաւունքների համաձայն, ստանալու է ինժեների կոչում: Տեխնիկական մէջ ընդունվում են բոլոր այն երիտասարդները, որոնց ստացած կրթութիւնը ցած չէ բարձր տարրական դպրոցներից: Զբաղմունքները սկսվելու են բոլոր ճիւղերում սեպտեմբերին: Պայմանները ուղարկվում է տեխնիկական դիւանատունը: Տեխնիկականը գտնվում է Րուժէյնայա փողոցի վրա, № 6/8 տանը»:

◆ Այսօր երեկոյեան ժամը 9-ին, կօնսերվատօրիայի դահլիճում կայանալու է բանաստեղծուհի Մարիէտտա Շահինեանի երկրորդ և վերջին դասախօսութիւնը՝ «Հայ սօցիալիստ Միքայէլ Նալբանդեան»: Դասախօսութիւնից յետոյ կարդալու է սեփական մի քանի բանաստեղծութիւններ: Մարիէտտա Շահինեանը նոր-նախիջևանցի է, կրթութիւն ստացել է Մօսկվայում, աւարտել է կանանց բարձրագոյն կուրսերի երկու ֆակուլտէտ՝ փիլիսոփայական և բնագիտական՝ և այժմ փիլիսոփայական ամբիօնի թեկնածու է և պատրաստում է իր դիսերտացիան գիտական աստիճան ստանալու համար: Մինչև այժմ լոյս են տեսել նրա հետևեալ երկերը. երկու հատոր բանաստեղծութիւններ, որոնցից 2-րդը՝ «Orientalia»-ն՝ ունեցաւ երեք հրատարակութիւն և գնահատվեց ռուսական քննադատութիւնից: Բացի դրանից՝ հրատարակվել են նրա պատմուածքներից երկու հատոր, մի հատոր քննադատական գրուածքներ, մօտ ժամանակներս էլ լոյս է տեսնելու նրա մի վէպը՝ «Вѣст. Европа»-ում: Վէպը կոչվում է «Сама сосудбою»: Մ. Շահինեանը դասախօսութիւնից յետոյ մեկնելու է Նոր-Նախիջևան:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

✖ «Веч. Время»-ն հաղորդում է, որ Հելսինգֆորսում վերջին օրերը տեղի են ունեցել գաղտնի խորհրդակցութիւններ բուրժուական և սօցիալիստական կուսակցութիւնների՝ ներկայութեամբ սէյմի նախագահի: Որոշված է կրկին անգամ ինքնագլուխ սէյմ գումարել: Ժամ. Կառավարութիւնը սէյմը գումարելու դէպքում մնում էր իր նախկին հայեցակէտին՝ այդ ինքնագլուխ գործողութեան վերաբերութեամբ:

✖ Երէկվանից սկսվել է Պետրօգրադ ժամող ճամբորդների վկայագրերի ստուգութիւնը: Առանց պատշաճ թոյլտուութեան ոչ ոքի չեն թողնելու մայրաքաղաք մտնել:

✖ Ամբողջ մամուլը՝ սօցիալիստական և ոչ-սօցիալիստական՝ կենտրոնական պետութիւնների պատասխանը Վատիկանին՝ համարում են մութ և կեղծաւոր, որից զիջումների նշոյլ չի նկատվում:

✖ «Раб. газета»-ն գրում է. «Նոտայի մէջ ոչ մի խօսք չը կայ, թէ Գերմանիան հրաժարվում է տուգանքներից և կցումներից: Միայն միջազգային դեմօկրատիայի միաբանութիւնը կարող կը լինի իրականացնել հաստատ խաղաղութիւն»:

✖ «Воля Народа»-ն ասում է. «Ռուսաստանը զիջումներ չը պէտք է սպասի Վիլհելմից և Հինդենբուրգից: Ոչ Ստոկհօլմի վրա եղած յոյսերը, ոչ միջազգային դեմօկրատիայի ուղղված կոչերը չեն օգնի: Մի երկիր, որ ընկճված է, դիմադրելու ընդդիմակութիւնն ու ցանկութիւնը կորցրած, նրա կոչերը կը միան ձայն բարբառոյ յանապատի»:

✖ «Новая Жизнь»-ի կարծիքով այժմ հասել է ահեղ և պատասխանատու րօպէն, երբ Ռուսաստանի յեղափոխական դեմօկրատիան իրաւունք ունի անմիջապէս ներկայացնել գերմանական բանւոր դասին պահանջի մուրհակ:

✖ «Нов. Время»-ն գրում է. «Նոտան վերջ ի վերջոյ յանգում է այն մտքին, թէ «Թողէք իմ ձեռքում այն բոլորը, ինչ գրաւել եմ, և այն ժամանակ ես կը լինեմ շատ զիջող մարդ»:

✖ Պետրօգրադ եկած ֆինլանդական սէյմի փոխ-նախագահ Սէտալ և սենատոր Ցերֆիֆիուս Ժամ. Կառավարութեան ներկայացրին մի զեկուցում՝ Ֆինլանդիայի պարենաւորման գործի մասին: Խոտի պակասութեան և որևէ տեսակ կեր չը ստանալու պատճառով՝ Ֆինլանդիայում մորթում են անասուններին. ձմեռը Ֆինլանդիան զրկված է լինելու կաթից և իւղից: Ժամ. Կառավարութիւնը խոստացաւ ֆինլանդական պատգամաւորութեան՝ ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ:

✖ Ժամ. Կառավարութիւնը յարգեց դաւանութեանց մինիստր Կարտաշևի խնդիրը՝ ընդունել նրա հրաժարականը: Կերէնսկիին ուղղած նամակում Կարտաշևը գրում է. «Ժամ. Կառավարութեան վրա գործած սօցիալիստների որոշակի բռնութեան և կօալիցիօն կաբինէտ կազմելու անհնարինութեան պատճառով, խնդրում եմ արձակել ինձ դաւանութեան մինիստրի կոչումից և Ժամ. Կառավարութեան անդամութիւնից»:

✖ Այն յոյսը, թէ Կերէնսկիին կաջողվի լիովին բացատրութիւն տալ Կորնիլովի գործի մասին, խորտակվում է: Քաղաքում սկսել են շրջել ամենաանհաւանական լուրեր: Օրինակ՝ լուր է տարածվել, թէ Կերէնսկին իբրև ինքնապաշտութիւն է գործել: Ուրիշները հաւատացնում են, որ Կերէնսկին զօրքեր է հաւաքում՝ ի դէպս բօլշևիկների յաղթութեան:

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Քաղ. ընտրութիւններ եւ Դաշնակցութիւնը

Գանձակ, 4 սեպտ.

Երէկ տեղի ունեցան քաղ. ընտրութիւնները նոր հիմունքներով: Ընդամենը հրապարակ էին եկել 8 ընտրական ցուցակներ, որոնցից № 6-ը Հ. Ժ. Կուսակցութեանն էր: Գայքարող գլխաւոր ուժը կազմում էր № 3 սօցիալիստական բլօկը: Դաշնակցականներն այստեղ ես դիմում էին իրանց հին, զզուելի փէշակին՝ բռնութիւն գործ դնելով ընտրողների ազատ կամքի վրա: Անմիջապէս սրա-նրա ձեռքից պատառում էին ուրիշ №№-ը և տեղը առաջարկում դաշնակց. № 4 ցուցակը: Առանձնապէս մեծ էր նրանց կատաղութիւնը Հ. Ժ. Կ. թեան դէմ, որին հայհոյելը և չարախօսելը իրանց ամբողջ գործունէութեան աջողութեան գրաւական էին համարում դաշնակց. բուրժուա ջոջերը... Ընտրութեան արդիւնքը դեռ պարզված չէ, բայց դաշնակց. այս անգամ արտաքին ձևական աջողութիւն կունենան հայերի մէջ:

Մենտոր Միրամ

Ճգնաժամային դրութիւն

Երևան, 20 օգոստոս

Ծայրագաւառի դրութիւնը օրէ-օր կը խճճուի ու կը լըջանայ: Օր չանցնիր, որ սպանութիւններ, աւար ու թալան չըլլան, երկաթուղային գիծն իսկ անապահով վիճակի մէջ է: Պատահեցաւ որ նոյն իսկ աւազակներ յանդգնեցան յարձակիլ անցնող գնացքին վրայ և ռմբակոծել, որմէ յետոյ զրահապատ և սպառազէն վագոն մը հսկողութիւն կընէ Երևան-Ղամարլու-Էջմիածնի գծի վրայ և յաճախ կռուի կը բռնուի աւազակներուն հետ:

Գիւղերուն մէջ կառավարութիւնը խոպառ կը պակսի. միլիցիա գրեթէ չկայ, դասալիքները անհաշիւ են: Կառավարութեան անզօրութիւնը ցուցնելու համար արժէ պատմել հետևեալը: Երևանէն զինուած միլիցիօներներ կերթան Դ. գիւղը դասալիքները տանելու: Զինւորները գիւղ կը հասնին և խանութի մը առջև կը հանդիպին դասալիքներուն: Եկողները տեսնելով և կռահելով անոնց գալու դրդապատճառը, դասալիքներէն մէկը, ձեռքը մաուզերին վրայ դնելով, «ինչի՞ էք եկած» կը հարցնէ: «Ձեզ տանելու» հազիւ թէ պատասխանած էր միլիցիօնէրը, երբ դասալիքը կը պոռայ վրան և կըսէ իրեն, որ եթէ քաղաք ու այլևս դասալիք բռնելու համար դուրս չելլէ:

Զարկն ու թալանը մասսայական բնոյթ է ստացած: Այլևս մէկով չեն սպաններ, այլ 20-ով և նոյնիսկ աւելին: Պզտիկ արշաւանքներ, պաշարումներ և յարձակումներ կը կազմակերպուին: Գերիներ ալ կը տարուին: Կատարեալ մանեօվր: Յայտնապէս կերևի որ երկրի ներսը ուժեր լարուած են իրար դէմ, որ ուշ կամ վաղ պէտի պայթին անպայման: Իրականութիւնն է այս. պէտք է խոստովանիլ: Պէտք է չէզոքացնել զանոնք:

Մայր երկրի մէջ նիւթուած այս բոլոր գործողութիւնները շատ ճիշդ կերպով կարելի է համաձայնեցնել թշնամիի շարժումներում: Որոմը ցանուած է, որ առատ հունձք կարող է տալ, եթէ թողնուի մինչև կալոցին: Շինական զինուորը ռազմաճակատին վրայ թշնամիի գնդակներու և ռումբերու տարափին տակ հայրենիքը կը պաշտպանէ. աղդին՝ երկրի ներսը սև ույժեր կը սպառնան իր ընտանիքի գոյութեանը: Իսկ ինչ կընեն մեր «դեմօկրատիայի պաշտպան» կուսակցութիւնները. գրեթէ ոչինչ. Թղթէ կռիւ իրար դէմ: Մենք կը սպասենք, որ անոնք տեսարանութենէ աւելի գործնական ըլլան: Աֆիշային պաշտպանութիւնն ու սրտացաւութիւնը փարա մը չ'ընեն:

Դրութիւնը աւելի քան ճգնաժամային է:

ԲԷՆ-ՍԷ

ԱՐՁԱԳԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՏՌՎԱԾ ՎԱՐԱԳՈՅՐ

II

Կարաքիլիսէ, 4 սեպտեմբերի

Շրջանիս գիւղացիութեան գործնական գիւղատնտեսութիւն սովորեցնելու համար ուղարկված գիւղատնտեսը՝ երկու տարի է, ինչ մենակ ռոճիկ է ստանում, իսկ փորձնական դաշտի համար 915-ից սկսած յատկացված բիւջէն մեռ է գործադրութեան դրվելու. եթէ գործադրութեան դրվել է, մեռ է այդ փորձնական դաշտը:

Կարուկ մենք ասում ենք, որ Ալաշկերտում Գիւղատնտ. Ընկ. վարած գործունէութիւնը՝ յանձինս շրջանիս գործիչների՝ չի համապատասխանում Ընկերութեան հետապնդած նպատակներին, և այդ ձև գործունէութեան երեսից մի հսկայական շրջանի ազգաբնակութիւնն է տուժում:

Յիշել դարձեալ կատարված զորութիւնների, շահատակների և ամօթալի անցքերի մանրամասնութիւնները:

Այժմ անցնենք Հ. Կենտ. Կոմիտէի տարած գործունէութեան:

Կենտ. Կոմիտէի Ալաշկերտի պարենաւորման մասնաճիւղը, որ դժբաղդաբար լաւ հիմքերի վրա չէ դրվել, շատ անբաւարար արդիւնք է տալիս: Մթերքները շատ ուշ են ստացվում, բաժանման և մատակարարման ձևը բաղդից և պատահականութիւնից է կախված. 10-ից աւելի գիւղեր ունենք, որոնք պահեստի բացման օրից մինչև օրս չեն օգտվել, իսկ ընդհակառակը՝ մենք կարող ենք թւել բոլոր այն գիւղերը, որոնք իրանց կարիք եղած չափից աւելի օգտվել են: Գալով պահեստի հաշիւներին, պէտի ասել, որ շնորհիւ հաշուապահ Ա. Մարգարեանի — համաձայն Շարաֆեանի հաշիւները քննած միջոցին յայտնած գոհունակութեան — բաւարար է: Մենք անբաւարար ենք համարում պահեստի գործունէութիւնը, բայց զգում ենք նոյնպէս, որ Կոմիտէն դրանից էլ աւելի չէր կարող անել:

Շարաֆեանի կարծիքը՝ պահեստի դրական կամ բացասական գործունէութեան վերաբերմամբ՝ մազաչափ արժէք չունի, և ոչ էլ Զարախչեանի խեղաթիւրված հեռագիրը, որ գալիս է մեզ հեղինակի բարոյական արժէքը ցուցադրելու:

Ամենից հեղինակաւոր խօսքը Ալաշկերտի համագիւղացիութեանն է պատկանում:

Կենտ. Կոմիտէն Ալաշկերտում պահում էր նոյնպէս մի որբանոց. 130—150-ից բաղկացած որբ երեխաներ պահվում, սնվում և դաստիարակվում էին բաւարար և առանելի պայմանների մէջ, ի հարկէ այն չափով, ինչքան հնարաւոր էր Ալաշկերտում:

Կոմիտէի տրամադրած ամսական շատ պակաս բիւջէով Ալաշկերտի մէջ եղելական որբանոց չէր կարելի պահել: Սակայն շնորհիւ Գ. Փարաջանեանի և ուսուցիչ Ռ. Զօրաշխեանի, և վերջերս ուղարկված կառավարչուհի օր. Ս. Քութօյեանի պարտաճանաչութեան՝ Ալաշկերտի որբանոցը կարելի էր բարձր դասել մեր Կովկասի մի շարք որբանոցներից: Մենք ասում ենք այս, որովհետև եղել և տեսել ենք Կովկասի որբանոցները:

Մենք բաւարար ենք համարում Կենտ. Կոմիտէի յանձին Գ. Փարաջանեանի տարված գործունէութիւնը:

Քաղաքների Միութեան շրջանում տարած բացասական գործունէութիւնը՝ մի շարք պատճառներով՝ առ այժմ չենք ուզում գրել և մանրամասն նիւթ դարձնել: Այդ առիթով շտապով շրջանից մեկնելու են մի քանի անձնաւորութիւններ՝ ուր որ անկ է դրութիւնը պարզելու:

Շարուր

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄ.

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Ուստր, 26 յուլիս (ն. տ.)

Ամերիկահայ գաղթականութեան մէջ գոյութիւն ունեցող երկար տարիներու հա-

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ

ՕՐԳԱՆՕՏԵՐԱՊԵՎՏԻԿ ՄԻՋՈՑԸ

Իրան նախահայր է համարում Պարիզի պրօֆես. Բրօուն-Սէկարին և կայանում է նրանում, որ հիւանդի օրգանիզմի մէջ մուծւում է անհրաժեշտ նիւթը (ֆէրմէնտներ) կենդանիների գեղձերից: Օրգանօտէրապէվտիկ բուժիչ պրէպարատների թւին է պատկանում ՍԵՐՄՆԱՅԻՆ ԳԵՂՁԵՐԻ ՀԻՒԹԸ (Սէկարօվեան հեղուկ) Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբօրատօրիայի,

որը բնորոշվում է հետևեալ բուժիչ յատկութիւններով.

Քանի օրգանիզմը երիտասարդ է և առողջ, մինչև այդ նա կարողանում է, առանձին թթւուտների և ֆերմէնտների օգնութեամբ, որ ներս են հոսում արեան մէջ նրա սերմնային գեղձերից, անվտանգ դարձնել թունալից նիւթերը (տոքսինները) և դուրս վանել նրանց երիկամունքների միջոցով: Բայց հէնց որ օրգանիզմի ֆունկցիաները թուլանում են, որ նկատելի է առաւելապէս հիւանդութիւնների և ծերութեան ժամանակ, թուլանում է նաև սերմնային գեղձերի գործունէութիւնը, որից յետոյ նուազում կամ բոլորովին դադարում են այդ գեղձերից արեան մէջ հոսող թթւուտների ու ֆերմէնտները: Դրանից արեան մէջ առաջանում է տոքսինների պակասութիւն, որի հետևանքը լինում է միզային թթւուտի երևան գալը: Հէյգի նորագոյն գիտական աշխատասիրութեան («Միզային թթւուտը որպէս հիմնական պատճառ քրօնիկական հիւանդութիւնների») և այլոց ցուցմամբ կատարելապէս ապացուցված է, որ բազմաթիւ և զանազան հիւանդութիւնները, անժամանակ ծերութիւնը և մինչև անգամ մահը առաջ են գալիս մարդկային օրգանիզմը միզային թթւուտի կողմից աստիճանաբար թունաւորվելուց: Սերմնային գեղձերից պատրաստված հիւթը ներկայանում է զօրեղ հալեցնող միզային թթւուտի, որովհետև, Բրօուն-Սէկարի դիտողութիւնների հիման վրա, նա պարունակում է հէնց այն թթւուտներն ու ֆէրմէնտները, որոնք պակասում են ծերերի, հիւանդների և թուլակազմների արեան միջից: Այդ հիւթը, մտնելով արեան մէջ, արագացնում է նրա գործունէութիւնը, հալեցնում և ոչնչացնում է միզային թթւուտը, այսինքն՝ նախազգուշացնում, հեռացնում է քրօնիկական հիւանդութիւնների պատճառը և օրգանիզմը դնում է բնական վերածնութեան ուղիղ ճանապարհի վրա:

Այժմ միայն յայտնի է բժիշկների շրջանում եղած այն աշխուժութիւնը, որ ունի կենդանիների սերմնային գեղձերից պատրաստված հիւթը— Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբօրատօրիայից: Արդէն 4000-ից աւելի բժիշկներ նշանակում են Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբօրատօրիայում պատրաստված սերմնային հիւթը այնպիսի հիւանդութիւնների ժամանակ, որոնք առաջանում են օրգանիզմի մէջ տոքսինները և միզային թթւուտը կուտակվելուց, այն է՝ նէվրաստէնիայի, իստէրիայի, նէվրալգիայի, էպիլէպսիայի, սեռական թուլութեան, զառամութեան, արեան պակասութեան, հիւծուածութեան եւ բելի, կաթուածի, պօդագրայի եւ յօդացաւի, շաքարահիւանդութեան, ղիաբէտի, տուբերկուլօզի, բրօնխիտի, արտէրիօսկլէրօզի եւ գիրութեան, գլխացաւի ու անքնութեան, ողնուղեղի հիւծման, մարսողութեան եւ սրտի գործունէութեան անկանոնութեան, տիֆից, քութէշից, դիֆտերիտից, սիֆիլիսից, ծննդաբերութիւնից, անդամահատութիւնից առաջացած թուլութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ:

Դ. Կալէնիչէնկօյի օրգանօտէրապէվտիկական լաբօրատօրիան սերմնային հիւթը պատրաստում է բնական, սառը ճանապարհով, առանց կրակի և քիմիական բէակցիայի: Մնացած այլ հիւթերը, էկստրակտները, դրանց թւում եւ սպէրմինը՝ պատրաստված լինելով այլ ճանապարհով՝ չեն կարող պարունակել որոշ օրգանի բուժարար ֆերմէնտների հատքերը, որովհետև, քիմիապէս պատրաստելով՝ սաստիկ ներգործող թթւուտների և կրակի աջակցութեամբ, մեռնում են այդ հիւթերի մէջ եղած սերմնային գեղձերի ֆերմէնտները: Բազմաթիւ այն դիտողութիւններից, որ արել են բժիշկներ, պրօֆեսօրներ, լազարէթներ և հիւանդանոցներ՝ Դ. Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայի սերմնային հիւթը գործադրելիս, մենք այստեղ կը յիշենք միայն մի քանի պրօֆեսօրների և լազարէթների անունները, և կը բերենք մի քանի բժիշկների արած դիտողութիւններ:

Պրօֆեսօրներ

Վ. Ա. ՇՏԱՆԳԷ—(Պետրօգրադ).
Դ. Ն. ՇԻՐՇՕՎ—(Պետրօգրադ).
Ս. Ս. ՋԻՄՆԻՑԿԻՅ (Կազան).
Ս. Կ. ԳՕԳԻՏԻԴԻԷ (Օդեսսա).
ՎԻՆՕԳՐԱԴՕՎ (Պետրօգրադ).
ԲԵՐՏԵՆԵՎ (Խարկօվ).
ԳԵՕՐԳԻԷՎՍԿԻՅ (Խարկօվ).
ԿՕՆԴԱՏՕՎ (Իւրիէվ):

Լազարէթներ

1) Լազարէթ № 2, Զեմստ. Միութ., Սարատով.
2) Հիւանդանոց № 2, Քաղ. Միութ., Կիէվ.
3) Հիւանդանոց № 12, Կարմիր Խաչ, Սիմֆերոպոլ.
4) Լազարէթ № 62, Զեմ. Միութ., Րօստով Դ/Վ.
5) Լազարէթ № 240, Քաղ. Միութ., Պետրօգրադ.
6) Հիւանդանոց № 1, Զեմ. Միութ., Եկատերինօսլավ.
7) Ծովային հիւանդանոց, Կրօնշտադտ.
8) Էվակուաց. հիւանդանոց № 39, Տուլա.
9) Լիմանի հիւանդանոց Կարմիր Խաչի, Օդէսսա.
10) Իզօլից. հիւանդանոց, Օդէսսա.

Պ. Պ. ԲԺԻՇԿՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Բժ. Ի. Մ. Պլէվցօվի դիտողութիւնը. Մոսկվա (լազարէթ): Ես սկսեցի ինձ վրա փորձել Կալէնիչէնկօյի Մոսկվայի լաբօրատօրիայի սերմնային գեղձերի հիւթը: Վերջինիս ներգործութիւնը փայլուն հետևանք ունեցաւ. առաջ քայլում էի սենեակի մէջ դժուարութեամբ, այժմ ես կարողանում եմ ոտով երկար զբօսնել, մինչև անգամ 5-րդ յարկում գտնվող իմ հիւանդներին այցելել: Անքնութիւնս անհետացաւ, մարմինս կշռով էլ աւելացաւ: Այդ հանգամանքը ինձ քաջալերեց և իրաւունք տուեց սերմնային հիւթը գործադրել հիւանդների և վիրաւոր զինուորների բժշկութեան գործում: I դէպք.— Պրապօրշչիկ Զ.: Վիրաւորված էր շրապնելով ձեռքի ձախ թաթից, որի փոքր մասի ոսկորը ջարդվել էր: Գանգատվում էր գլխացաւից, անքնութիւնից, յիշողութեան թուլութիւնից և ճնշված տրամադրութիւնից: Վէրքը բժշկվում էր շատ դանդաղ: Նշանակեցի Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայի սերմնային հիւթից գործածել օրական 3 անգամ՝ 20-ական կաթիլ: Մինչև մի շաբաթ ընդհանուր դրութիւնը նկատելի կերպով լաւացաւ. երեսի գոյնը թարմացաւ, անքնութիւնն անհետացաւ, վէրքի ցաւերը դադարեցին: Մի քանի օր ես հիւանդը գործածելով սերմնային հիւթը՝ աւելի աչքի զարնող հետևանքներ ունեցաւ: Յիշողութիւնը վերականգնեց, հիւանդը սիրով պարապում է ընթերցանութեամբ, տրամադրութիւնը նորմալ է, վէրքը համարեա թէ առողջացել է, մղձաւանջն այլևս չէ կրկնվում: II դէպք.—Զինուոր Բ.: Վիրաւորված է ձախ ծնկից, ոտի փափուկ մասից: Գնդակը մտած տեղը առողջացել է, իսկ գնդակը դուրս եկած տեղը սկսել է թարախով ծածկվել: Հիւանդը հաւատացնում է, որ քայլել չէ կարողանում, երկու ոտների մէջ էլ թուլութիւն զգալու պատճառով: Հիւանդը խօսակցութեան ժամանակ յաճախ փոխում է տրամադրութիւնը, մերթ ծիծաղում է, մերթ լալիս: Նշանակված էր ընդունելու համար Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայի «սերմնային հիւթից» օրական 3 անգամ 15-ական կաթիլ, Բօրժօմի ջրի հետ: Հիւանդը ակներև կերպով սկսեց լաւանալ և մինչև երկու շաբաթը հիստէրիայի նշանները անհետացան, տրամադրութիւնը ուրախ և հանգիստ բնոյթ ստացաւ, սկսեց ման գալ և վէրքն էլ առողջացաւ: („Голосъ Врача").

2) Ներքին հիւանդ. կաֆէդրայի պատկառելի պրօֆ. Ա. Մ. ՇԻԼՏՕՎԻ դիտողութիւնը: Խարկօվ, Գօգօլի փողոց № 6.

«Չափազանց շնորհակալ եմ Ձեզանից Ձեր հիանալի պրէպարատով (սերմնային հիւթ՝ Դ. Կալէնիչէնկօյի լաբօր.) ինձ ուղարկելու համար: Թէ ես եւ թէ իմ եղբօր-որդին լաւ հետևանքներ ունեցանք: Մէկ եւ կէս ամսվայ ընթացքում իմ մկանային ոյժերս ըստ դինամօմետրի աւելացան մինչեւ 4 կիլօ (տարիքս 76 է), տրամադրութիւնս ակներև փոխվեց դէպի լաւը, ախորժակս բաւականին աւելացաւ: Մի ամսից յետոյ, եղբօր-որդուս հազը եւ խորխը դադարեց, ոյժերը բաւականին աւելացան: Այն հիւանդները, որոնց խորհուրդ էի տուել Ձեր պրէպարատը գործածել, շատ գոհ մնացին: Ես իմ կնոջս բժշկում էի Սպէրմին-Պելով, սակայն հետևանքները բացասական եղան»

3) Բժշկ. Ա. Մ. ԿԵԱՆՕՎՍԿԻ դիտողութիւնը: Կամէցնի գիւղ, Նօվօվիլէյսկի գաւառ, Վիլն. նահանգ: ա) «Մի 47 տար. հիւանդ, թոքախտաւոր, գանգատվում էր մահվան ճիրաններում: Երկրորդ սրուակ դեղը ընդունելուց յետոյ բոլորովին վերականգնվեցաւ, թոքերի թարախային պալարներն ամբողջովին ծածկվեցին. եւ քննելիս սարսափելի հիւանդութեան միտանշանները այլեւս չէին նկատվում: Թէ ես եւ թէ իմ պաշտօնակիցները հիացած ենք Ձեր դեղի փայլուն հետևանքներից»: բ) «Մի պառաւ կալուածատիրուհի, որ հիւանդ էր յօդացաւով եւ ջրգողութեամբ, այդ դեղից երկու սրուակ ընդունելուց յետոյ կարողանում է երկարատև զբօսնել: Ուռեցքները չքացել են, նոյնպէս եւ բոլոր յօդային ցաւերը: Իրան 20 տարով ջահելացած է զգում»: գ) «Մի քահանայ 52 տարեկան, որ հալումաշ էր եղել մալարիայից, մի սրուակ ընդունելուց յետոյ առողջացաւ: Ամեն ինչ փորձել էր, սակայն անօգուտ. իսկ 3 շաբաթվայ ընթացքում, այն էլ մի սրուակ ընդունելով, մարդը վերականգնեց իր առողջութիւնը»: «Ես գնում եմ Բերլին եւ Պարիզ, ուր Բժշկ. Ընկ. մէջ պիտի զեկուցում կարդամ իմ փորձերի մասին՝ Դ. Կալէնիչէնկօյի սերմնային գեղձերից պատրաստված հիւթի վերաբերմամբ»:

4) Բժ. Կ. ԲԵՆՏԿՕՎՍԿԻ դիտողութիւնը. Պոլտավա: «Ինքս ընդունելով Դ. Կալէնիչէնկօյի «սերմնային հիւթը» օրական 2 անգամ 30 կաթիլից, նկատեցի իմ մէջ ակնյայտ փոփոխութիւն դէպի լաւը: Ման գալ կարողանում եմ երեք անգամ աւելի, քան առաջ էր: Առաջները իմ փորձած սպէրմինը այդ աչքառութիւնը երբէք չունեցաւ: Իրաւ որ սերմնային հիւթը արագացնում է մարդու օրգանիզմի մէջ գտնված միզային աղերի նուազումը, որը ես նկատել եմ իմ մէզը անալիզի ենթարկելով»:

5) Բժ. Պ. Ա. ԱՆՏԻՊԻՆԻ դիտողութիւնը: Դէղօվիչի կայար., Մ.-Վ.-Ր. երկաթուղի:

«Մի վարժուհի 28 տար. (Ս. Պ.) ունեցել էր թոքերի բորբոքում, մի տարուց յետոյ՝ տիֆ, որից յետոյ տեղի էր ունեցել ուժեղ անէմիա եւ թուլազգացութիւն: Հիւանդը ամբողջ երկու ամիս պառկած էր անկողնում, եւ ոչ մի դեղ չէր օգնում նրան: Մէկ խորանարդ միլ. արեան մէջ ես խաչօրացոյցով գտայ 3.700.000 կարմիր գնդակներ: Իսկոյն ես գրեցի նրան դեղատոմս՝ գործածելու սերմնային գեղձերից քամված հիւթ, եւ չորս սրուակ ընդունելուց յետոյ հիւանդի անէմիան սկսեց արագօրէն անհետանալ: Վեց սրուակից յետոյ ես հաշվեցի նրա արեան կարմիր գնդակները եւ գտայ 6.300.000 հատ: Հիւանդի ոյժերը այնքան վերականգնեցին, որ նա կարող է այժմ պարապել երեխաների հետ: Ուշադրութեամբ քննելով եւ ուսումնասիրելով պրէպարատը, ես կարող եմ համարձակ ասել, որ դա ամենալաւ եւ ուժեղ դեղ է շատ հիւանդութիւնների դէմ»:

6) Նովգորոդի զինուոր. հիւանդ. աւագ բժիշկ ՏԱԼԻԶԻՆԻ դիտողութիւնը: «Մօտ 70 տարեկան մի պառաւ կին հիւանդ էր ամբողջ երկու ամիս խրօնիկական յօդացաւով: Երկարատև հիւանդութիւնը եւ զառամութիւնը հիւանդին կատարեալ կմախք էին դարձրել: Հիւանդը մի տարուց աւելի պառկած էր անկողնի մէջ: Չորս ամիս անցնելուց յետոյ, երբ հիւանդ դեղի ամբողջ պաշարը նա ընդունեց, հիւանդը կարողացաւ ոտքի կանգնել եւ ազատ ման գալ սենեակում»:

7) Բժշկապետ Պ. ԾԷՆԿԻՆԻ (Խարկօվի համալսար. ասիստենտ) դիտողութիւնը: «Ես ունէի ստամոքսի կատարր եւ 4—5 օր շարունակվող կապութիւն: Բժշկական ոչ մի միջոց ինձ չօգնեց. բայց հէնց որ սկսեցի ընդունել սերմնային գեղձերից պատրաստված հիւթը, մինչեւ երկու շաբաթը կանոնաւորվեց իմ ստամոքսը, եւ այժմ ամեն օր կատարում եմ իմ բնական պահանջը: Երբ ես ժամանեցի Եալտա, իմ մարմնի կշիռը 3 պուդ 20 ֆունտ էր. իսկ այժմ՝ 3 պուդ $28\frac{3}{4}$ ֆունտ է: Կլիմայական ոչ մի պայման առաջին երկու ամսում ինձ ոչինչ չօգնեց, այլ, ընդհակառակն, ես աւելի թոյլ էի զգում ինձ եւ նիհարում էի. բայց հէնց որ սկսեցի խմել Ձեր դեղը, երեք շաբաթից յետոյ ես ինձ 60 տարով ջահել էի զգում (ինքս 60 տարեկան եմ)»:

8) Վարշավայի մանկ. հիւանդ. աւագ բժիշկ Ա. ԴՕԲՐԺԱՆՍԿԻ դիտողութիւնը: «Պ. Պ., ոսկրացաւով բռնված մի ծերունի, որի ձեռքերի մատները վերջերս սկսել էին սաստիկ ցաւեր զգալ, Ձեր դեղից երկու սրուակ ընդունելուց յետոյ՝ ցաւերը նուազեցին եւ ոտները սկսեցին ազատ շարժումներ անել: Բայց գլխաւորն այն է, որ մէզի մէջ եղած միզային թթւուտը, որի վերջին անալիզը ցոյց էր տուել հազարին (pro mille) 4,27, գտնվում էր հալված դրութեան մէջ, այնպէս որ խոշորացոյցով քննելիս հազիւ մի քանի բիւրեղիկներ էին նկատվում»:

9) Բժ. Վ. ՄԱՏՐՈՍԵՎԻՉԻ (Լուբնա) դիտողութիւնը: «Մի հիւանդ, 26 տարեկան, նեղ կրծքով, թուլակազմ, որ մի քանի անգամ արիւն էր թքել, ախորժակը վատ, թախծոտ, իր հիւանդութեան (թոքախտ) վատ հետևանքները նախազգացող, բժշկվում էր ինձ մօտ: Ես նշանակեցի նրան ընդունել Դ. Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայում պատրաստված սերմնային գեղձերից քամված հիւթից: Հիւանդի ախորժակը բացվեց, տրամադրութիւնը լաւացաւ: Մինչեւ երկու շաբաթը երիտասարդն աշխատել սկսեց: Մինչեւ երկու ամիսը նրա մարմնի կշիռը 21 ֆունտով աւելացաւ: Հազը դադարեց: Կարող եմ համարձակ անել այս եզրակացութիւնը, որ «սերմնային հիւթը" վերականգնում է օրգանիզմի ոյժերը՝ կռւելու վնասակար հիւանդութիւնների դէմ, եւ այդպիսով այս կամ այն հիւանդութիւնից երերված առողջութիւնը նորից վերականգնում է»:

—

Այստեղ մենք անհրաժեշտ ենք համարում մատնանշել, ՈՐ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՍ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ԵՐԵՒԱՆ ԵՆ ԳԱԼԻՍ Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱՅԻ ՍԵՐՄՆԱՅԻՆ ՀԻՒԹԻՆ ՆՄԱՆԵՑՎԱԾ ԿԵՂԾԻՔՆԵՐ (ԻՆՉՊԷՍ ՕՐԻՆԱԿ «ՓԱԼԷՆԸ»), որոնք մեր կողմից կը հետապնդվեն համաձայն օրէնքի:

Պ. պ. բժիշկներին, լազարէթներին եւ հիւանդանոցներին Դ. Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայի սերմնային հիւթը՝ փորձերի համար՝ ուղարկվում է:

Դ. Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայի սերմնային հիւթի միջոցով կատարված բժշկութիւնների վերաբերեալ կայ ընդարձակ գրականութիւն (4000-ից աւելի բժշկական դիտողութիւններ), որ ուղարկվում է ցանկացողներին ձրի:

Դ. Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայի սերմնային հիւթի մի սրուակն արժէ 5 րուբլի 25 կ.:

Փօստ. տարիֆը աւելանալու պատճառով, 1—6 սրուակ պատուիրելուց՝ ճանապարհածախքը պատուիրողի հաշվին. իսկ 6-ից աւելին—լաբօրատօրիայի հաշվին: Փօստային 20 տոկոսի տուրքը վերադիր վճ. համար—պատուիրողի հաշվին:

Դ. Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայի սերմնային գեղձերի հիւթը ծախվում է Ռուսաստանի բոլոր դեղատներում և դեղավաճառանոցներում:

Հասցէն՝ Органотерапевтическая лабораторія Д. Калениченко, Москва, Козловскій пер. соб. д., № 11, кв. 211.

Հեռ. հասցէն՝ Москва, Калефлюидъ. (15, 30). 0—7

տնտեսական ու կուսակցական ազատ պայքարը հազիւ վերջ գտած Ազգային Միութեան կազմութեամբ, եղբայրական համերաշխ գործակցութեան ոգին հազիւ մեր ազգային կազմակերպութիւններու այլամերժ հոգիներէն ներս թափանցած, ահա հրապարակ կուգայ առաջնորդական խնդիրը և դաժան պայքարին նախադուռը կը բանայ:

Ամերիկահայոց նախկին առաջնորդին հրաժարեցման ամբողջական պարագաները ես ժամանակին հրապարակած եմ այս էջերուն մէջ և նոյնը կրկնել աւելորդ կը նկատեմ:

Փետր. 18-ի երեսփոխանական ժողովի օրէն ամերիկահայ եկեղեցական գործերը քաոսի մատնուեցան, երբ նախկին առաջնորդ Արսէն վրդ. մերժելով երեսփոխանական ժողովին իր մասին արձակած վճիռը՝ բռնի կերպով փորձեց շարունակել առաջնորդական պաշտօն, որմէ հեռացուցած էին զինքը սահմանադրական օրէնքներու հիման վրայ:

Ստոյգ է, որ ամերիկահայ թեմերու բացարձակ մեծամասնութիւնը ժողովին քուէարկած որոշումը առաջին օրէն իսկ յարգեց և դադրեցուց ամեն յարաբերութիւն Արսէն վրդ.-ին հետ, անգամ իր անուան յիշատակութիւնը եկեղեցիներուն մէջ: Սակայն գտնուեցան մէկ քանի իրեն համախոհ թեմեր, որ իր բռնազբօսիկ պաշտօնավարութիւնը երեւութապէս օրինական նկատեցին: Ասիկա պատճառ մը եղաւ, որ եկեղեցական կազմակերպութիւնը քաոսային վիճակի մատնուի, որուն պատասխանատուութիւնը Արսէն վ.-ին վրայ կը ծանրանայ:

Փետր. 18-ի երեսփ. ժողովի օրէն անցած են հինգ երկար ամիսներ: Այսքան երկար ժամանակամիջոցի մը մէջ իրաւամբ կը սպասուէր, որ Էջմիածնի հոգևոր իշխանութիւնը հարցը մանրազննին քննութեան ենթարկելէ և երեսփ. ժողովին օրինաւորապէս քուէարկած որոշումը հաստատելէ ետք՝ ըսէր իր վերջին խօսքը:

Երեսփ. ժողովի կողմէն ուղարկուած պաշտօնական տեղեկագիրը՝ ազգիս Վեհ. Հայրապետին՝ ամեն բան կը պարզէր: Այդ տեղեկագրէն կարելի էր եզրակացնել երեսփ. ժողովի վճիռին արդարացի ու բանաւոր ըլլալը՝ ներկայացուած փաստերուն անհերքելի ու անառարկելի բնոյթին ի նկատի ունենալով: Էջմիածնի հոգևոր իշխանութիւնը, ցաւալի է ըսել, ցարդ լուռ մնացած է: Ոչ մէկ պատասխան ստացուած է այս հարցի մասին, չնայած որ հինգ ամիսներ անցած են:

Չգիտենք թէ ինչն լռութիւնը կը լինի հոգևոր իշխանութեան պատասխանը այսքան հրատապ ու կենսական բնոյթ կրող հարցի մը մասին, որ սերտօրէն կապուած է ամերիկահայ գաղթականութեան հանգստային խաղաղ կեանքին հետ:

Եկեղեցական կազմակերպութիւնը իր աննախանձելի վիճակէն դուրս բերելու համար՝ երեսփ. ժողովի դիւանը տեղապահութեան պաշտօնին հրաւիրեց—համաձայն փետր. 18-ի ժողովի որոշումին—Բարգէն եպիսկ. Կիւլէսէրեանը: Նորին գերապատւութիւնը երկարօրէն ուսումնասիրելէ ետք առաջնորդութեան հետ կապուած դէպքերն ու պարագաները, ինչպէս նաև համոզուած ըլլալով, որ Արսէն վարդ. իր պաշտօնէն հրաժարեցուած էր օրէնքին բոլոր տրամադրութիւններն յարգուելով, նկատելով նոյնպէս, որ Արսէն վարդ. մայիս ամսէն քաշուած էր իր գնած ագարակը և ագարակապանութեամբ կը զբաղէր, իրեն առաջարկուած առաջնորդական տեղապահութեան առժամանակեայ պաշտօնն ստանձնեց՝ եկեղեցական գործերը ներկայ քաոսային դրութենէն դուրս բերելու և կարգի ու կանոնի մէջ դնելու համար:

Առ այս հրաւէր ուղղած է բոլոր երեսփոխաններուն, ամսոյս 29 ի կիրակին գումարուելիք երեսփոխանական ժողովին ներկայ գտնուելու, թէ կեդրոնական վարչութիւն ընտրելու (կեդրոնական վարչութիւնը կազմալուծուած է) և թէ մէկ քանի ընթացիկ հարցերու լուծման համար:

Տեղապահ սրբազանին սոյն հրաւէրը առիթ մը եղաւ, որ Արսէն վարդ. նորէն իր գլուխը վերցնէ (թէև իր գլուխը երկու ամիսէ ի վեր է, որ իր ագարակէն դուրս հանած չէ) և իբրև «հրաժարեալ առաջնորդ» հրապարակաւ արգելք հանդիսանայ ժողովի գումարման: Այս առիթով հրապարակը նորէն աղմկել սկսաւ, որ ժամանակէ մը ի վեր խաղաղած էր: Սկսուած պայքարը՝ առաջնորդական հարցին շուրջ՝ չգիտեմ թէ ինչ համեմատութիւններ պիտի առնէ, բայց ակներև է, որ յուլիս 29-ին հրաւիրուած երեսփոխանական ժողովին դուրս պիտի մնան մէկ քանի թեմերու երեսփոխանները, —որ փոքրամասնութիւնը կը ներկայացնեն,—որոնք ժողովին որոշումներուն դէմ պիտի ըմբոստանան՝ իրենց աջակից ունենալով Արսէն վ. Վեհանին:

Իրենց այս կացութիւնը կրնայ փրկել Էջմիածնի հոգևոր իշխանութիւնը: Պայքարը իր խանձարուրին մէջ իսկ պէտք է խեղդել և չթողուլ, որ սուր համեմատութիւններ առնէ: Էջմիածին այս ժամանակ կորսնցնելու չէ և պէտք է շարժիլ, այլապէս քաոսը և անիշխանութիւնը պիտի շարունակուին և հայ եկեղեցին ազատ պայքարի մը նշաւակ պիտի դառնայ:

Մաղաք Գ. Պէրպէրեան

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ.

Թիֆլիս, 12 սեպտեմբերի

Հայկական Դրամատիկ Ընկերութեան վարչութիւնը իր եռանդուն անդամ և շնորհալի թատերասէր Ասպուրակէս Միքայէլեանի վաղաժամ մահվան առթիւ՝ յայտնում է խորին ցաւակցութիւն հանգուցեալի ծնողներին և մերձաւորներին:

ՑԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Թիֆլիս, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606» ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ 11 12 ժ.
ԲԺՇԿՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—10 կէսից—12 կէս ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութիւն և ծաղկահատ:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11 կէսից—1 կէս ժ. մորթու հ. վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւ.
Մ. Մ. ԲԵՆՐԱՏՕՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւններ:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ն. ԽՍԱՀՋԵԱՆ—6—7 ժ. կանանց և մանկ. բուժական.
Հիւանդներ 50 կ.: Չքաւորներ ձրի: Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" խմբագրատանը
Վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
Հետևեալ հրատարակութիւնները

1) «Գեղունի» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . . 4 ր.
2) «Հացի կտոր զէյթունցուն», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
3) «Շէքսպիր եւ իր «Համլէտ» ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները», Պ. Ադամեանի . . 1 ր.
4) «Երկասիրութիւնների առաջին կապուկ», Քամալեանց Ս.-ի . . 50 կ.

0—10

Գաւանակի ս. Յովհաննէս եկ. դպրոցի համար հարկաւոր է մի

Փորձված դասատու

2, 3, 4 դասարաններում (և ոչ բաժանմունք) հայոց լեզու, 5, 6 դաս. եկեղեցական պատմութիւն աւանդելու: Ռոճիկը է 24 դաս, 50 րուբ. հիմնական դասաժամով և 50% յաւելումով: Պաշտօնավարը դալիս ներկայացնելու է ուսուցման և փորձառութեան վկայագրեր: Խնդիրներ կարելի է տալ մինչև հոկտ. 1-ը այս հասցէով: Попечительству училища при церкви св. Іоанна.
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՆՑ

Հոգևոր իշխանութեան թոյլտուութեամբ հարկադրված եմ հեռանալ իմ սիրելի հօտից և նոր ծուխ որոնել:

Ցանկացողներին ամեն կերպ երաշխիք:

Դիմել՝ Елисаветполь, заводъ „ЛЕДЪ", Левону Мелконянцу. 1115. 2—2

Ս. Դ. Բ. Հայ Կազմ. Թիֆլիսի Կօմիտէն

—ԲԱՑՈՒՄ Է—

Հայ գրագիտութեան դասընթացներ

Դասաւանդութիւնները սկսվելու են սեպտեմբերի 20-ից երեկոները ժամը 8—10-ը: Ցանկացողները նախօրօք կարող են ցուցակագրվել Կազմակերպ. Բիւրօյում (Գօլօվինսկի № 11) ամեն օր առաւօտ. ժամը 11—1-ը, երեկ. ժ. 6—8-ը:

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Միաւորութեան հսկողութեան ներքոյ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

Երկսեռ անձերի համար

(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տելէֆօն № 9—76.) Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից: Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից: Ծրագիրներն ու կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից:

983. 0—19

(ա. օ.)

МЕДИЦИНА ДЛЯ ВСѢХЪ.

Популярны заочный курсъ медицинскаго факультета.

Единственное изданіе на русскомъ языкѣ.

Познаніе медицины есть познаніе самого себя, познаніе устройства своего тѣла, назначенія и дѣйствія отдѣльныхъ органовъ, заболѣваній этихъ органовъ и ихъ леченія.

Весь заочный курсъ состоитъ изъ шести томовъ, содержащихъ: анатомію, физіологію, бактеріологію, гигіену, болѣзни внутреннія, кожныя, венерическія, женскія и дѣтскія.

Отдѣльныя части курса составлены и редактированы професс. и прив.-доцент. Московскаго Университета.

Все изложено такъ, что вполнѣ доступно пониманію всякаго грамотнаго и мыслящаго человѣка. Въ текстѣ помѣщены многочисленные пояснительные рисунки.

Цѣна изданія тридцать рублей. При условіи высылки денегъ впередъ при заказѣ цѣна за все изданіе только 25 р. При разсрочкѣ присылается задатокъ шесть р. и при полученіи каждаго тома уплачивается по четыре р. (за пересылку прибавляется по 50 к. за томъ). Приславшіе при подпискѣ сразу 25 р. за пересылку не платятъ.

Первые томы уже вышли изъ печати и разсылаются подписчикамъ. Остальные печатаются и будутъ высылаться по мѣрѣ выхода, причемъ все изданіе будетъ закончено въ декабрѣ с. г.

Безъ задатка заказы не исполняются. Проспектовъ объ изданіи не высылаемъ.

Требованія адресовать: изд-ству „ВОЛЯ", Б. Дмитровка, 26/110.

Типографія „ЭКНООМІЯ" Тифлисъ,